



Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017 թվականին
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նազմավարության ծրագրի կատարման վերաբերյալ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	6
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	14
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	18
■ Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում և բարեփոխումներ	18
■ ՀՊԳ հեղինակության բարձրացում	28
■ Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում	28
■ ՀՊԳ աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում	29
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ. ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	30
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	36
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	38
■ Դատարաններում փաստաբանների զննության դեպքերով փաստաբանների իրավունքների պաշտպանության հարցով Փաստաբանների պալատի կողմից իրականացրած գործողությունների մասին	40
■ 2017 թվականի ընթացքում փաստաբանների նկատմամբ հարուցված քրեական գործերը	44
■ 2017 թվականի Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվող քաղաքացիական գործերը	45
■ 2017 թվականի Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվող քրեական գործերը	46
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ	47



■ 2017 թվականի 1-ին կիսամյակի վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման վերլուծությունը	49
■ 2017 թվականի 2-րդ կիսամյակի վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման վերլուծությունը	53
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ	
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	58
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ - ԱՐՑԱԽ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	60
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ	
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ	64
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ	
ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՁՈՐԱՑՈՒՄ	75
■ Ակումբ	75
■ Գիտավերլուծական կենտրոն	75
■ Երիտասարդական խորհուրդ	75
■ Մարզամշակութային ակումբ	76
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ	
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	78
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ	
ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	91
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ	93
■ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 11.02.2017թ.	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ	93
■ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 09.09.2017թ.	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ	100
■ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ 2005 - 2017թթ.	
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ	
ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ	
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	102
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ	
ՊԱՇՏՊԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՐՁՐԱՑՐԵԼ Է ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇ	
ՆՈՐՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ	105



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ	107
«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ	109
Հավելված թիվ 1՝ Փաստաբանների դեմ ներկայացրած բողոքների և կարգապահական վարույթների վիճակագրություն	111
Հավելված թիվ 2՝ Փաստաբանների դեմ ներկայացրած բողոքների և հարուցված կարգապահական վարույթների վիճակագրություն	112
Հավելված թիվ 3՝ 2017 թվականին Փաստաբանների պալատի խորհրդի կողմից քննված և ավարտված գործերի վիճակագրություն	115
Հավելված թիվ 4՝ Փաստաբանների պալատի նախագահի իրավական ակտերի վիճակագրություն	117
Հավելված թիվ 5՝ Փաստաբանների պալատի գործավարության վիճակագրություն	118
Հավելված թիվ 6՝ Փաստաբանների պալատի խորհրդի գործունեության վիճակագրություն	119
Հավելված թիվ 7՝ Հաշվետվություն՝ ՀՊԳ վարած քրեական գործերի վերաբերյալ	120
Հավելված թիվ 8՝ Հաշվետվություն՝ ՀՊԳ վարած քրեական քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերի վերաբերյալ	125
Հավելված թիվ 9՝ Հանրային պաշտպանի գրասենյակ դիմած քաղաքացիներն՝ ըստ «փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կատեգորիաների	129





ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետվության մեջ ներկայացված է 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Փաստաբանների պալատ**) խորհրդի 25.12.2014թ. թիվ 37/4-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2015-2017 թվականների **ռազմավարության ծրագրի** (**այսուհետ՝ Ռազմավարական ծրագիր**) կատարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ:

Փաստաբանների պալատի 2015-2017 թվականների ռազմավարության ծրագրով նախատեսված են 2015-2017 թվականների համար Փաստաբանների պալատի ռազմավարական հիմնական 12 ուղղություններ, որոնցով ներկայացված են այն նվազագույն նպատակները, որոնք Փաստաբանների պալատն իր առջև դրել է:

Սույն հաշվետվության մեջ Փաստաբանների պալատի 2017 թվականի ռազմավարական ծրագրի կատարողականը ներկայացված է ոլորտային սկզբունքով առանձնացված գլուխներով:

Սույն հաշվետվությունը հաստատվել է Փաստաբանների պալատի խորհրդի 2018 թվականի հունիսի 16-ի թիվ 12/17-Լ որոշմամբ:






ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Փաստաբանների պալատի աշխատակազմի կառուցվածքային փոփոխություններ.

Դեռևս 2016 թվականին Փաստաբանների պալատի նախագահի համապատասխան հրամանով հաստատվել էր փաստաբանների պալատի վարչակազմակերպական նոր կառուցվածքը, աշխատակազմի ոլորտային դասակարգումը և աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների (աշխատանքային գործառույթների) նոր շրջանակը, որով աշխատակազմի գործառույթները վերախմբագրվել և առավել հստակեցվել են ըստ գործունեության ոլորտների:

2017 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի աշխատակազմը գործել է ստորև պատկերված կառուցվածքով:





2017 թվականին Փաստաբանների պալատի հաստիքացուցակով, ինչպես նաև աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների (աշխատանքային գործառնությունների) շրջանակով որպես Փաստաբանների պալատի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում ստեղծվել է իրավական ապահովման բաժին:

Իրավական ապահովման բաժնում նախատեսված է իրավական հարցերով երկու փորձագետի հաստիք:

Իրավական հարցերով փորձագետը՝

✓ Կազմում է Փաստաբանների պալատի խորհրդի որոշումների, նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին որոշումների, ինչպես նաև ներքին և անհատական այլ իրավական ակտերի նախագծեր.

✓ Կատարում է Փաստաբանների պալատին հասցեագրված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և ներկայացնում է առաջարկությունների և դիտողությունների նախագիծ.

✓ Իրեն հանձնարարված բնագավառում կատարում է իրավական հետազոտություններ.

✓ Ուսումնասիրում է Փաստաբանների պալատին հասցեագրված իրավական ակտերի նախագծերը և դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ և դիտողություններ:

✓ Փաստաբանների պալատի մասնակցությամբ դատական գործերով կազմում է անհրաժեշտ դատավարական փաստաթղթեր և մասնակցում է դատական նիստերին.





**■ Փաստաբանների պալատի աշխատակազմում կառավարման
ժամանակակից համակարգերի ներդրում.**

Փաստաբանների պալատի աշխատակազմում (այդ թվում՝ հանրային պաշտպանների համար) դեռևս 2016 թվականից ներդրվել են գործավարության և փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգեր:



**«Mulberry»
փաստաթղթաշրջանառության
էլեկտրոնային համակարգ**

**«Էլեկտրոնային հանրային պաշտպան»
համակարգ**

■ «Mulberry» փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ

2016 թվականի փետրվար ամսից սկսած Փաստաբանների պալատում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է «Mulberry» միջազգային չափորոշիչներին համապատասխանող էլեկտրոնային կառավարման համակարգով, որն առավել արդյունավետ է դարձնում փաստաթղթերի հետ առօրյա աշխատանքը: Այս համակարգի միջոցով Փաստաբանների պալատի առօրյա փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է թվայնացված ձևաչափով, ինչն ապահովում է նաև փաստաթղթավորման արխիվացումը միասնական էլեկտրոնային շտեմարանում: «Mulberry» համակարգի առավելություններից է նաև հանձնարարությունների բաշխման և կատարման ժամկետների սահմանման էլեկտրոնային ձևաչափը, ինչն արդյունավետ է դարձնում հանձնարարությունների կատարման ժամկետների վերահսկողությունը, ինչպես նաև արտացոլում է հանձնարարությունների մակագրման և կատարման ընթացքը: Այս համակարգի շնորհիվ աշխատակիցները նաև կարողանում են առանց թղթային արխիվից համապատասխան նյութեր պահանջելու, ծանոթանալ իրենց հանձնարարությանը նախորդած փաստաթղթաշրջանառությանը՝ նույն դիմողի նախկինում ներկայացված այլ դիմումներին, նույն խնդրի վերաբերյալ նախկինում տրված պատասխանված գրություններին և այլն:



«Էլեկտրոնային հանրային պաշտպան» համակարգ

2016 թվականից սկսած ամբողջ ծավալով գործարկվում է «Էլեկտրոնային հանրային պաշտպան» էլեկտրոնային ծրագիրը:

Էլեկտրոնային հանրային պաշտպանի ծրագրի մշակումն ու ներդնումն իրականացվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA ROLI) և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է կենտրոնացնել և առավելագույնս արդյունավետ դարձնել ՀՊԳ գործունեությունը: Այն իրենից ներկայացնում է ՀՊԳ էլեկտրոնային կառավարման համակարգ, որն ունի ՀՊԳ գործունեության ընթացքում կիրառված փաստաթղթերի արխիվացման և հաշվետվությունների ավտոմատ գեներացման հնարավորություններ:

«Էլեկտրոնային հանրային պաշտպան» ծրագիրը հանրային պաշտպաններին հնարավորություն է տալիս, չգտնվելով աշխատավայրում, կատարել իրենց աշխատանքային որոշ գործառույթներ: Այն ամբողջական տեղեկատվական բազա է, որը թարմացվում է յուրաքանչյուր պահի:


Ծրագրով ներդրված մոդուլները հնարավորություն են տալիս բարձրացնել հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության որակը, հաշվի առնելով համակարգի հետևյալ գործառույթները՝

- ✓ հանրային պաշտպանների աշխատաժամանակի տնտեսում և նրանց ծանրաբեռնվածության նվազեցում.
- ✓ հանրային պաշտպանի գրասենյակի կառավարումը, փաստաթղթերի կազմումը և շրջանառությունը, տեղեկատվության որոնումն ու առցանց օգտագործումը, ինչպես նաև հանրային պաշտպաններին գործերի մակագրումն ապահովող միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգի առկայություն.
- ✓ հանրային պաշտպանի գրասենյակի գործերի (անվճար իրավական օգնություն ստանալու դիմումների) արդյունավետ բաշխում.
- ✓ հանձնարարականների (գործի) առցանց մակագրում.
- ✓ հանրային պաշտպանի գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացում.
- ✓ հանրային պաշտպանի գործունեության վիճակագրության վարում.
- ✓ հանրային պաշտպանի կողմից ըստ տարբեր չափանիշների տրամադրվող հաշվետվությունների գեներացում.
- ✓ հաճախորդների տվյալների շտեմարանների վարում.
- ✓ տիպային փաստաթղթերի գեներացում.



- ✓ յուրաքանչյուր գործով (խորհրդատվություն, փաստաթղթի կազմում, ներկայացուցչություն, պաշտպանություն և այլն) առանձին էլեկտրոնային արխիվի վարման հնարավորություն.
- ✓ դատական նիստերի կամ դատավարական (քննչական) այլ գործողությունների վերաբերյալ օրացույցի վարում և դրանց անցկացման ժամանակի և տեղի վերաբերյալ համապատասխան հիշեցում.
- ✓ էլեկտրոնային արխիվի վարում.
- ✓ համակարգում անհրաժեշտ չափանիշներով տեղեկատվության որոնում:

Ծրագրի միջոցով ապահովվում է նաև Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումների և որոշումների կենտրոնացված և միասնական հաշվառումը, ինչպես նաև այն հնարավորություն է տալիս իրականացնել էլեկտրոնային մոնիթորինգ և վերահսկողություն մարզերի հանրային պաշտպանների կողմից գործերի վարման ժամկետների և արձանագրված արդյունքների վերաբերյալ:






Փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատակիցների թվի վերլուծություն.

2017 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Փաստաբանների պալատում (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակում) աշխատել է **114 անձ**, որից՝

- ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմում՝ 24 աշխատող¹.
- Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակազմում՝ 18 աշխատող.
- Հանրային պաշտպան՝ Երևան քաղաքում և մարզերում՝ 72 աշխատող:



Փաստաբանների պալատի 2012-2017 թվականների հաստիքացուցակներով միայն ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի համար նախատեսված հաստիքների քանակի համեմատական վերլուծությունը հանգում է հետևյալին.

¹ ՀՀ փաստաբանների պալատի 24 հաստիքներից 10-ի աշխատավարձի դրույքաչափի 50%-ը վճարվում է պետական բյուջեի մասին համապատասխան օրենքով հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացված գումարից, քանի որ այդ հաստիքների գործառույթներն ուղղված են նաև հանրային պաշտպանի գրասենյակի սպասարկմանը:



Համեմատական ժամանակահատված	2012	2013	2014	2015	2016	2017
Աշխատողների փաստացի քանակ	23	21 *	24	24	22	24

Նշված տվյալների վերլուծության արդյունքում կարելի է գալ այն եզրահանգման, որ հինգ տարվա ընթացքում Փաստաբանների պալատի աշխատողների միջին թվաքանակը² չի փոխվել, չնայած այն հանգամանքին, որ նույն ժամանակահատվածում շուրջ եռակի անգամ աճել է Փաստաբանների պալատի գործավարության և իրավական ակտերի վիճակագրական ցուցանիշը: Այսպես՝ **2012 թվականի** ընթացքում Փաստաբանների պալատի **մտից փաստաթղթերի քանակը կազմել է 686**, իսկ **2017 թվականին՝ 3382, այսինքն՝ 2696 հարով կամ 393%-ով ավել:** 2012 թվականին Փաստաբանների պալատի **եկից փաստաթղթերի քանակը կազմել է 809**, իսկ **2017 թվականին՝ 1783, այսինքն՝ 974 հարով կամ 120%-ով ավել:** Մտից փաստաթղթերի աճի հետ մեկտեղ աճել է նաև Փաստաբանների պալատի իրավական ակտերի քանակը: **2012 թվականին** Փաստաբանների պալատի **նախագահին ընդունել է 165 որոշում**, իսկ **2017 թվականի** ընթացքում **ընդունվել է 500 որոշում՝ 2012 թվականի համեմատությամբ ավել 335 հարով կամ 203%-ով:**

Վերոնշյալ ցուցանիշներից բացի, 2017 թվականին 2012 թվականի համեմատությամբ շուրջ 640 անձով կամ 50%-ով աճել է նաև գործող փաստաբանների քանակը³:

Հատկանշական է նաև այն, որ 2012 թվականին Փաստաբանների պալատը տեղակայված է եղել Երևան քաղաքի, Զաքյան 3 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի առաջին հարկում և Փաստաբանների պալատի կողմից օգտագործվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմել է մոտ 356 քմ, իսկ 2014 թվականի ապրիլից միայն Փաստաբանների պալատը զբաղեցնում է Երևան քաղաքի, Զաքյան 7-2 հասցեի շենքի չորրորդ հարկում գտնվող մոտ 757 քմ մակերեսով (չհաշված մյուս հարկերը և ընդհանուր օգտագործման տարածքները) տարածք՝ նախկինի համեմատությամբ գրեթե կրկնակի անգամ ավել:

² 2012 – 2017 թվականների համար միայն Փաստաբանների պալատի աշխատակազմում աշխատողների միջին քանակը կազմում է 23 աշխատող: Նշված ցուցանիշը ստացվել է հինգ տարվա աշխատողների հանրագումարը (23+21+24+24+22+24) 6-ի բաժանելու միջոցով:


³ 2012 թվականի դեկտեմբերի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է մոտ 1270 փաստաբան, իսկ 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է 1911 փաստաբան:



2017 թվականին գործող փաստաբանների թիվը

2017 թվականի դեկտեմբերի 21-ի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է 1911 փաստաբան, որից 812 կին փաստաբան (42%), իսկ 1099 տղամարդ փաստաբան (58%):

Կասեցված արտոնագրով փաստաբանների թիվը կազմել է 270 փաստաբան:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

■ **Փաստաբանների պալատի (այդ թվում՝ ՀՊԳ) նյութատեխնիկական բազայի արդիականացում**

Փաստաբանների պալատը շարունակել է նյութատեխնիկական բազայի արդիականացումը՝ մեծ ուշադրություն դարձնելով հանրային պաշտպանի մարզային գրասենյակների գույքի և սարքավորումների արդիականացմանը:

Փաստաբանների պալատի նյութատեխնիկական բազայի արդիականացման ծրագիրն իրականացվում է նաև ՀՊԳ մարզային նստավայրերում: Յուրաքանչյուր տարի վերստին բարելավվում և նյութատեխնիկական արդի հնարավորություններով է ապահովվում ՀՊԳ առնվազն մեկ մարզային նստավայր:

Դեռևս 2015 թվականի ներդրված ընթացակարգերի համաձայն Փաստաբանների պալատում գույքի ձեռքբերման, ինչպես նաև ծառայություններից օգտվելու անհրաժեշտության դեպքում գործընկեր կազմակերպությունն ընտրվում է առնվազն երկու գնային առաջարկ ստանալու պայմանով:

■ **Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի դահլիճի վերանորոգում**

2017 թվականի դեկտեմբերին Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի դահլիճը Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, բարերար Ռայմոն Եզեզեյանի կողմից տրված նվիրատվության միջոցներով հիմնովին վերանորոգվել է:

Դահլիճը նախատեսված է խորհրդի նիստերի վարման և քննարկումների անցկացման համար:

Դահլիճը կահավորվել է հատուկ նստարաններով, որոնք նախատեսված են խորհրդի կարգապահական նիստերին կարգապահական վարույթով կողմ չհանդիսացող անձանց համար:





Ֆինանսարդեսական գործունեության թափանցիկության ապահովում և հաշվետվողականություն

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար նախապես կազմում և Փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացվում համապատասխան տարվա տարեկան բյուջեն, որտեղ առանձին հոդվածներով արտացոլված են տվյալ տարվա համար կանխատեսվող դրամական մուտքերը (եկամուտները) և հնարավոր ծախսային ուղղությունները:

Յուրաքանչյուր տարի Փաստաբանների պալատի նախագահի կողմից Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանն է ներկայացվում տարեկան բյուջեի կատարողական հաշվետվությունը:

2017 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը ներկայացվել է առավել մանրամասն հաշվետվություն, որտեղ արտացոլված են եղել Փաստաբանների պալատի 2017 թվականի եկամուտների (մուտքերի) վերլուծությունը, 2017 թվականի ծախսերի ընդհանուր վերլուծությունը, ինչպես նաև 2017 թվականի ծախսերի վերլուծությունն ըստ 2017 թվականի տարեկան բյուջեով նախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածների:





Հաշվետվությունը հրապարակվել է Փաստաբանների պալատի կայքէջում (միայն փաստաբանների հասանելիության ձևաչափով):

Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունն ապահովվում է կայքում առկա «Հաշվետվություններ» բաժնում (որը տեսանելի է միայն փաստաբանների համար) Փաստաբանների պալատի ֆինանսական հաշվետվությունները հրապարակելով, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր փաստաբանի ծանոթանալու Փաստաբանների պալատի ֆինանսական շարժին:

Հաշվետվությունները հրապարակվում են եռամսյակային կարգով, իսկ հետո փոխարինվում են տարեկան հաշվետվությամբ:





ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՐԳԱՑՈՒՄ

* * *

Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում և բարեփոխումներ.

Ռազմավարության ծրագրով որպես հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացման նվազագույն միջոցառումներ առանձնացվել են հետևյալ գործողությունները.

➤ Հանրային պաշտպանների թվաքանակի ավելացման քաղաքականության վարում.

Հանրային պաշտպանության ոլորտում Փաստաբանների պալատի կողմից մշտապես բարձրացվող խնդիրներից է հանրային պաշտպանի թվաքանակի հարցը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված անվճար իրավաբանական օգնություն հայցելու իրավունք ունեցող անձանց շրջանակի և հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող քրեական և քաղաքացիական (այդ թվում՝ վարչական և սահմանադրական) գործերի վիճակագրության ⁴ ուսումնասիրությունը վկայում է հանրային պաշտպանների քիչ թվաքանակի մասին:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի՝ 2017 թվականին գործող խմբագրությամբ, քաղաքացիական (վարչական) գործերով անվճար իրավաբանական օգնություն պետք է տրամադրվեր ստորև թվարկված 15 սոցիալական խմբերի մեջ մտնող անձանց: Այդպիսիք են՝

- 1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները.
- 2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները.
- 3) դատապարտյալները.
- 4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի

⁴ ՀՊԳ վիճակագրությունը տես սույն հաշվետվության թիվ 7-9 հավելվածներում:



անդամները.


- 5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցները.
- 6) գործազուրկները.
- 7) միայնակ բնակվող կենսաթոշակառուները.
- 8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք.
- 9) փախստականները.
- 10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածները.
- 11) անվճարունակ այն ֆիզիկական անձինք, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համարել է բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.
- 12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք.
- 13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կապեզորիայի զոհ ճանաչված անձինք.
- 14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողները.
- 15) խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով⁵:

Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող հանրային պաշտպանների հաստիքների քանակը պայմանավորված է համապատասխան տարվա համար պետական բյուջեի մասին օրենքով հատկացվող միջոցների չափով:

⁵ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով խոշտանգումից տուժած անձանց որպես հանրային պաշտպանության ենթակա խմբի կարգավորումն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարից 9-ից:



«Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 2017 թվականի համար հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացվող միջոցներով Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակն ունեցել է ՀՊԳ ղեկավարի՝ 1, ՀՊԳ ղեկավարի տեղակալի՝ 1, Երևան քաղաքում և մարզերում հանրային պաշտպանի՝ 54 հաստիքների, ինչպես նաև 18 հաստիք՝ որպես ՀՊԳ օժանդակ աշխատակազմ:



*** ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**

1) Հանրային պաշտպանի համար հատկացված 55 հաստիքից մեկ հաստիք նախատեսվել է ՀՊԳ ղեկավարի տեղակալի համար (հանրային պաշտպանի հաշվարկային դրույքաչափով): Այդ պատճառով հանրային պաշտպանների հաստիքների քանակը Փաստաբանների պալատի հաստիքացուցակով, ինչպես նաև ՀՊԳ հաստիքների տեղաբաշխման ակտով սահմանված է 54:


2) ՀՊԳ օժանդակ աշխատակազմի 18 հաստիքներից 10-ի աշխատավարձի դրույքաչափի 50%-ը վճարվում է Փաստաբանների պալատի բյուջեից, իսկ մյուս 50%-ը՝ պետական բյուջեի մասին համապատասխան օրենքով հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացված գումարից, քանի որ այդ հաստիքների գործառույթներն ուղղված են և՛ Փաստաբանների պալատի և՛ հանրային պաշտպանի գրասենյակի սպասարկմանը:



➤ **Հանրային պաշտպանի հաստիքների վարչատարածքային տեղաբաշխումը.**

Փաստաբանների պալատը՝ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունն ապահովելու նպատակով հանրային պաշտպանի 54 հաստիքները տեղաբաշխել է **վարչատարածքային սկզբունքով** հաշվի առնելով նաև համապատասխան տարածքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկը:

Հանրային պաշտպանների հաստիքների վարչատարածքային սկզբունքով 2017 թվականի տեղաբաշխումը կարելի է տեսնել հետևյալ քարտեզի վրա.



* **ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.** Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում գործող հաստիքների հանրագումարը կազմում է հանրային պաշտպանի 26 հաստիք:



Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում անվճար իրավաբանական օգնության տրամադրումն ապահովելու նպատակով ՀՊԳ նստավայրերն են գործում ոչ միայն մարզկենտրոններում, այլ նաև մարզերի խոշոր քաղաքներում: Որոշ դեպքերում, կախված համապատասխան մարզում և/կամ մարզի քաղաքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկից, նախատեսված է հանրային պաշտպանի ոչ միայն 1 լրիվ, այլ նաև 0,5 և 0,25 դրույքներ:

Մարզում հանրային պաշտպանի մեկ հաստիքի մասնատումը 0,5, իսկ որոշ դեպքերում նաև 0,25 դրույքների՝ հնարավորություն է ընձեռնում առավել արդյունավետ կառավարել հանրային պաշտպանի աշխատաժամանակը, ինչպես նաև ապահովել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը ոչ միայն մարզկենտրոնում, այլ նաև տարածական առումով հեռու, սակայն մարզկենտրոնից ոչ պակաս բնակեցված վայրերում:

➤ **ՀՊԳ պաշտպան դառնալու ընթացակարգի թափանցիկության բարձրացում և մրցակցության եղանակների կատարելագործում.**

2014 թվականից սկսած⁶ հանրային պաշտպանների հաստիքների համալրումն իրականացվում է մրցութային կարգով⁷:

Փաստաբանների պալատի կողմից հաստիքների համալրման մրցութային քաղաքականության որդեգրումը նպատակ է հետապնդում, նախ և առաջ, ապահովել հանրային պաշտպան դառնալու գործընթացի թափանցիկությունը և օբյեկտիվ գնահատել հանրային պաշտպանի թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը:

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթն իրականացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր (հարցազրույց): Մրցույթի կազմակերպման և թեկնածուների աշխատանքների գնահատման համար յուրաքանչյուր տարի ստեղծվում է համապատասխան մրցութային հանձնաժողով, որն անցկացնում է մրցույթի ողջ ընթացքը և գնահատում է քննական առաջադրանքները:


Մրցույթի առաջադրանքը ընտրվում է թեկնածուների կողմից վիճակահանության միջոցով, իսկ առաջադրանքների գնահատման համար

⁶ Հանրային պաշտպանների հաստիքների համալրման մրցութային կարգը ներդրվել է 2013 թվականի հոկտեմբերից, իսկ առաջին մրցույթն անց է կացվել 2014 թվականի հունվարին:

⁷ Հանրային պաշտպանի թափուր հաստիքն արտամրցութային կարգով համալրվում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաստիքը մրցութային կարգով անցած թեկնածուներով համալրել հնարավոր չէ, օրինակ՝ երբ ՀՊԳ մարզային գրասենյակում առկա թափուր հաստիքի համալրման համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար որևէ թեկնածու չի դիմել:



մշակված է այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տալիս գնահատման գործընթացում բացառել սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:



Մրցույթի գրավոր փուլի ընթացքն՝ ըստ կարգի, իրականացվում է աշխատանքի ստուգման գործընթացում թեկնածուի անձի բացահայտումը (աշխատանքի հեղինակի նույնականացումը) բացառող կարգով: Մրցույթի մասնակիցն իր աշխատանքը տպագրում է երկու օրինակից, որոնց վրա փակցնում է այդ պահին պատահականության սկզբունքով արկղից վերցված ծածկագրերը (շտրիխ կոդ): Մրցույթի մասնակիցն իր աշխատանքի տպագրված օրինակներից մեկի վրա ստորագրում է ու անձամբ տեղադրում կնքված արկղի մեջ, իսկ աշխատանքի մյուս օրինակը, որի վրա առկա է միայն ծածկագիր (շտրիխ կոդը)՝ հանձնվում է մրցութային հանձնաժողովին: Գրավոր աշխատանքի ստուգման գործընթացում մրցութային հանձնաժողովի տիրապետության տակ եղած միայն ծածկագրով գրավոր աշխատանքը հնարավորություն չի տալիս նույնականացնելու աշխատանքի հեղինակի անձը:

Ծածկագրերով գնահատականները հրապարակելուց հետո, յուրաքանչյուր թեկնածու իր ծածկագրի և միավորի մասին տեղեկանում է կնքված արկղը բացելուց հետո:

Գրավոր փուլը հաղթահարած հավակնորդները հնարավորություն են ստանում մասնակցելու հարցազրույցի փուլին: Հարցազրույցի փուլում հաղթող ճանաչված հավակնորդներն ընդգրկվում են հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում:

2017 թվականի նոյեմբերին Փաստաբանների պալատը հայտարարել է մրցույթ հանրային պաշտպանի **13 հաստիքի** համալրման նպատակով:

Հայտարարված մրցույթի գրավոր փուլին մասնակցել են **28 փաստաբան**:



Մրցույթի գրավոր փուլը 28 մասնակիցներից հաղթահարել և մրցույթի բանավոր փուլին մասնակցելու իրավունքն են ստացել ընդհանուրը 18 փաստաբան: Նշված բոլոր փաստաբաններն հաղթահարել են նաև մրցույթի բանավոր փուլը և ընդգրկվել են հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում:

➤ Հանրային պաշտպանների մասնագիտացումն ապահովելուն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում.


2014 թվականից սկսած Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը համալրելու համար հանրային պաշտպանների մրցույթն անց է կացվում և հանրային պաշտպանները նշանակվում են աշխատանքի ըստ **քրեական** և **քաղաքացիական (վարչական)** մասնագիտացման:

2017 թվականին Երևան քաղաքում գործել է հանրային պաշտպանի 28 հաստիք (հանրային պաշտպանների ընդհանուր հաստիքների 52%-ը), որից 22 հաստիքը քրեական մասնագիտացմամբ (79%), իսկ 6-ը՝ քաղաքացիական (վարչական) մասնագիտացմամբ (21%):

**ՀՊԳ հաստիքների տեղաբաշխման
հարաբերակցությունն ըստ
վարչադարաձքային բաժանման
(Երևան քաղաք և մարզեր)**



**Երևան քաղաքում
ՀՊԳ հաստիքների տեղաբաշխման
հարաբերակցությունն
ըստ մասնագիտացման**



Հնարավորության դեպքում հանրային պաշտպանների մասնագիտացումն ապահովվում է նաև մարզերում: Այն մարզերում, որտեղ առկա են հանրային պաշտպանի մեկից ավելի հաստիքներ, հանրային պաշտպանների գործունեությունը նույնպես իրականացվում է ըստ քրեական և քաղաքացիական (վարչական) մասնագիտացման: Իսկ այն մարզերում, որտեղ գործում է հանրային պաշտպանի մեկ հաստիք, ապա այդ հաստիքը զբաղեցնող հանրային



պաշտպանն ընտրվում է այնպես, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտության դեպքում մարզի բնակչությանն ապահովել իրավական օգնության տրամադրումը և՛ քրեական և՛ քաղաքացիական (վարչական) գործերով:

➤ **Հանրային պաշտպանների խրախուսման եղանակների և ռոպացիոն համակարգի ներդրում՝ հասարիքների որոշակի տոկոսը սկսնակ փաստաբաններով համալրելու նպատակով.**

2015 թվականից Փաստաբանների պալատում գործում է հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և արդյունավետության գնահատման համակարգ, որն ապահովվում է «**Հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման**» հրահանգով սահմանված չափորոշիչներով:

Նշված հրահանգը սահմանում է հանրային պաշտպանի գրասենյակում առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչները և գնահատման ընթացակարգը:

Նշված հրահանգի համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում գործող հանրային պաշտպաններից յուրաքանչյուրի աշխատանքն՝ ըստ հրահանգով սահմանված միավորների, գնահատման հանձնաժողովի կողմից գնահատվում է **ընդհանուր չափորոշիչներով**, որոնց շրջանակներում հաշվի են առնվում հանրային պաշտպանի կողմից օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին մասնակցած լինելը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման համար կարգապահական տույժի ենթարկված չլինելը, աշխատանքային կարգապահության խախտման համար տույժի ենթարկված չլինելը, հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով փաստաբանական վարույթին վերաբերվող պահանջները կատարած լինելը:

Հրահանգով հանրային պաշտպանի աշխատանքը գնահատվում է նաև **ըստ հանրային պաշտպանի մասնագիտական ուղղվածության (քրեական ու քաղաքացիական և վարչական) չափորոշիչների**:

Հրահանգի համաձայն՝ **քրեական ուղղվածության** հանրային պաշտպանների աշխատանքը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի արդարացումների (լրիվ կամ մասնակի), ինչպես նաև արդարացնող և ոչ արդարացնող հիմքով վարույթը կարճված գործերի թիվը, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերը, ավելի մեղմ հոդվածով կամ հոդվածի



մասով վերավորակումները, տուգանքի նշանակումները, սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժի նշանակումները, անչափահասի նկատմամբ դատարանական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակումները, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, ինչպես նաև մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, որպես կալանավորման այլընտրանքային միջոց դատարանի կողմից գրավ ընտրելը, որպես խափանման միջոց ընտրված կալանքը մեկ այլ խափանման միջոցով փոխարինվելը և այլ չափորոշիչներ:

Քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպանների գործունեությունը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի վարչական մարմին կամ դրա վերադաս մարմնին ուղղված դիմումների, բողոքների, կատարված հարցումների թիվը, վարչական մարմնի կամ դրա վերադասի կողմից բավարարված վարչական բողոքների թիվը, կազմված հայցադիմումների, դիմումների թիվը, հոգուտ վստահորդի կայացված վերջնական դատական ակտերը, միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը և այլ չափորոշիչներ:

2017 թվականին գործող հանրային պաշտպանի **54 հաստիքով** աշխատող **71 հանրային** պաշտպաններից **13-ը** (գործող հանրային պաշտպանների մոտ **18%-ը**) համալրվել են երիտասարդ⁸ փաստաբաններով:

➤ **Հանրային պաշտպանների կողմից կատարված ծախսերի փոխհատուցման համակարգի ներդրում.**

2017 թվականի մարտին Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ նոր խմբագրությամբ է հաստատվել «**Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության համար անհրաժեշտ ծախսերի կատարման և հանրային պաշտպանների կողմից կատարված ծախսերի փոխհատուցման մասին**» կարգը, որով լրամշակվել է դեռևս 2016 թվականի սեպտեմբերին կարգավորված հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող հանրային պաշտպանների փաստացի կատարած ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության համար անհրաժեշտ այլ ծախսերի

⁸ Մինչև երեք տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբաններ:



կատարման հետ կապված հարաբերությունները:

Հանրային պաշտպանների ծախսերի հատուցման համակարգը որոշ չափով ներդրված էր նաև նախկինում, սակայն հատուցման ենթակա էր միայն ՀՊԳ գործունեության համար անհրաժեշտ այլ ծախսերի (կոմունալ ծառայություններ, փոստային ծառայություն, ինտերնետ կապ) փոխհատուցման համակարգը:

Նոր կարգով հստակեցվել են ՀՊԳ ծախսերի հատուցման չափանիշները, ինչպես նաև նախատեսվել է Երևան քաղաքում և մարզերում աշխատող հանրային պաշտպանների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համակարգ:

Կարգի համաձայն՝ հանրային պաշտպանի կողմից կատարված ծախսը ենթակա է փոխհատուցման, եթե՝

- 1) այդ ծախսի կատարումը անհրաժեշտ է հանրային պաշտպանություն իրականացնելու համար, և
- 2) այդ ծախսի կատարումը տվյալ պահին հնարավոր չէր նախապես կազմակերպել պալատի միջոցով, և
- 3) առկա է այդ ծախսի կատարումը հիմնավորող փաստաթուղթ, և
- 4) այդ ծախսի կատարումը չի գերազանցում 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամը, իսկ մարզային գրասենյակների դեպքում՝ կոմունալ ծառայությունների գծով այդ ծախսի գումարը չի գերազանցում 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամը, և
- 5) այդ ծախսի փոխհատուցման հայտը ներկայացվել է կարգով նախատեսված ժամկետում, և
- 6) այդ ծախսի կատարումը բխում է կարգի պահանջներից:

➤ Անվճար իրավական օգնության տրամադրման ծառայության որակի բարձրացում և ընթացակարգերի նկատմամբ վերահսկողության կառուցակարգերի մշակում և ներդրում.

Հանրային պաշտպանի գրասենյակում իրավական օգնության տրամադրման ծառայության որակի բարձրացման նկատմամբ վերահսկողությունն ապահովվում է Փաստաբանների պալատում գործող մոնիտորինգի բաժնի միջոցով, որը ներառում է երկու մոնիթորինգի պատասխանատուների հաստիք:

Մոնիտորինգի բաժնի ստեղծումը պայմանավորված է եղել հանրային պաշտպանների կողմից փաստաբանական վարույթները հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով սահմանված չափանիշներով վարելու նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև հանրային պաշտպանների կողմից տրամադրվող իրավաբանական օգնության որակի գնահատման նպատակով:



* * *

ՀՊԳ հեղինակության բարձրացում.

➤ **ՀՊԳ գործունեության լայն լուսաբանում, այդ թվում՝ հանրային պաշտպանների վարած գործերի և արձանագրված արդյունքների (արդարացումներ և այլ հաջողություններ) վիճակագրության հրապարակում.**

2017 թվականին իրականացվել է զանգվածային լրատվության տարբեր միջոցներով հանրային պաշտպանների գործունեության լուսաբանմանն ուղղված միջոցառումներ: Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության և հանրային պաշտպանների առանձին գործերի լուսաբանումն իրականացվել է հեռուստահաղորդումների, ռադիոհաղորդումների և համացանցի իրավական կայքերի միջոցով:

2017 թվականի ընթացքում հանրային պաշտպանների մասնակցությամբ թողարկվել է **39 հաղորդում՝ «Արմենիա»** հեռուստաընկերության «Սուր անկյուն», «Կենտրոն» հեռուստաընկերության «Հանցանքի հետքերով», «Հանրային» հեռուստաընկերության «Առավոտ Լուսո» հաղորդաշարերի, «Քո փաստաբանը» և «Սպառողի անկյուն» ռադիոհաղորդումների, ինչպես նաև Iravaban.net իրավական լրատվական կայքի միջոցով:

Փաստաբանների պալատի կայքէջում նախատեսվել է նաև հանրային պաշտպանների արդարացման դատական ակտերի հրապարակման բաժին, որտեղ մշտապես հրապարակվում են հանրային պաշտպանների վարույթում առկա գործերով արդարացման դատական ակտերը:

* * *

Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում.

➤ **ՀՊԳ գործունեությանն օժանդակելու և հանրությանն անվճար իրավական օգնություն (խորհրդավորություն) տրամադրելու նպատակով անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելու պատրաստակամություն ունեցող փաստաբանների ցանցի ստեղծում, *pro bono* մշակույթի ժողովրդականացում, այդ մշակույթի ամրապնդմանն ուղղված միջոցառումների, խրախուսման եղանակների փնտրում (հարկային բեռի նվազեցում տրամադրված անվճար իրավաբանական օգնությանը համաչափ և այլն):**

Հաշվի առնելով հատկապես քաղաքացիական գործերով բնակչության անվճար իրավական օգնության պահանջարկը, Փաստաբանների պալատը



Փաստաբանական դպրոցի հետ համատեղ իրականացնում է նաև քաղաքացիներին անվճար իրավական խորհրդատվության տրամադրման նախաձեռնություն, որը շարունակվել է նաև 2017 թվականին:

Ավելի քան չորս տարի է, ինչ Փաստաբանների պալատում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը հայտարարվել է անվճար խորհրդատվության տրամադրման օր:

2017 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի ջանքերով Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության որոշ մարզերում անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել **1661 քաղաքացու:**

* * *

ՀՊԳ աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում

➤ **ՀՊԳ-ի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների տրամադրում և կայքէջում դրանց տեղադրում.**

➤ Փաստաբանների պալատի կայքէջում ստեղծված «**ՀՊԳ հաշվետվություններ**» էջում շարունակվում են եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով հրապարակվել ՀՊԳ կողմից վարած քրեական, ինչպես նաև քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունները: Տարեկան վիճակագրական տվյալների ամփոփումից հետո ՀՊԳ եռամսյակային և կիսամյակային հաշվետվությունները փոխարինվում են տարեկան հաշվետվությամբ: ՀՊԳ 2017 թվականի վիճակագրական տվյալներն ամփոփ ներկայացված են սույն հաշվետվության հավելվածներում:





ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ. ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



➤ **Փաստաբանական դպրոցում ուսուցումն իրականացվում է ըստ մասնագիտական ուղղվածության.**

2014 թվականի աշնանային հոսքի ընդունելությունից սկսած Փաստաբանական դպրոցում ուսուցումը կազմակերպվում է ըստ **քրեաիրավական** և **քաղաքացիաիրավական մասնագիտական ուղղվածությունների**, ինչի արդյունքում համապատասխան մասնագիտացում ընտրած ունկնդիրները ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մոտ 90% հարաբերակցությամբ անցնում են նեղ մասնագիտական առարկաներ, օրինակ՝ քրեական ուղղվածության ունկնդիրները քրեաիրավական մասնագիտացման առարկաներ, իսկ մնացած առարկաները հարակից են և կրում են ընդհանուր բնույթ՝ անկախ ունկնդրի մասնագիտացումից, օրինակ՝ փաստաբանի վարքագծի, հոգեբանության հիմունքների, սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների հետ կապված առարկաները:

2017 թվականի գարնանային հոսքի ընդունելության արդյունքներով Դպրոց է ընդունվել և դասընթացներին ներգրավվել թվով 85 ունկնդիր, որից՝

ա. քրեական ուղղվածությամբ՝ 26 (21 առկա, 5 հեռավար),

բ. քաղաքացիական (վարչական) ուղղվածությամբ՝ 59 (47 առկա, 12 հեռավար):

2017 թվականի աշնանային հոսքի ընդունելության արդյունքներով Դպրոց է ընդունվել և դասընթացներին ներգրավվել թվով 92 ունկնդիր, որից՝

ա. քրեական ուղղվածությամբ՝ 26 (21 առկա, 5 հեռավար),

բ. քաղաքացիական (վարչական) ուղղվածությամբ՝ 53 (45 առկա, 8 հեռավար),

գ. հատուկ դիմորդի ուսուցման ծրագրով՝ 13 ունկնդիր:

* * *

➤ **Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման քննությունները.**

Փաստաբանական դպրոցի ունկնդիրների (շրջանավարտների)



որակավորման քննություններն անցկացնում է Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

Գործող կարգի համաձայն՝ Փաստաբանական դպրոցի ունկնդիրն ավարտելով ուսուցումը դպրոցում, որակավորման քննությանը մասնակցելու նպատակով Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան որակավորման հանձնաժողովին է ներկայացնում սահմանված ձևի լրացրած և ստորագրած դիմումը:



Որակավորման քննությունն անցկացվում է համակարգչի միջոցով՝ գրավոր ընթացակարգով: Ունկնդիրը որակավորման քննությունը հանձնում է այն ուղղվածությամբ (քրեական կամ քաղաքացիական), որով անցել է ուսուցումը Փաստաբանական դպրոցում:

Քրեական ուղղվածություն ընտրած ունկնդիրն առաջադրանք է կատարում՝

- 1) **քրեական մոդուլից**՝ առաջին ատյանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելով,
- 2) **քրեական մոդուլից**՝ միջանկյալ դատական կամ այլ ակտի դեմ բողոք կազմելով,
- 3) **դեոնթոլոգիայի մոդուլից**՝ փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ խնդիրներ լուծելով:



Քաղաքացիական ուղղվածություն ընտրած ունկնդիրն առաջադրանք է կատարում՝

- 1) **քաղաքացիական մոդուլից՝** առաջին ատյանի դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելով,
- 2) **քաղաքացիական մոդուլից՝** քաղաքացիական գործով հայցադիմում կազմելով,
- 3) **դեռնթուլոգիայի մոդուլից՝** փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ խնդիրներ լուծելով:

Ունկնդրի կողմից որակավորման քննության յուրաքանչյուր մոդուլ հանձնում է առանձին օր, իսկ մոդուլների հանձնման օրերի միջև ընդմիջումը պետք է լինի նվազագույնը 5 (հինգ) օր:

Յուրաքանչյուր մոդուլի հանձնման համար ունկնդիրը գնահատվում է առավելագույնը 20 (քսան) միավոր, իսկ որակավորման քննությունը հանձնած է համարվում և փաստաբանի արտոնագիր ստանալու իրավունք է ձեռք բերում այն ունկնդիրը, ով յուրաքանչյուր մոդուլի համար ստացել է առնվազն 12 (տասներկու) միավոր:

Որակավորման քննությունները իրականացվում է աշխատանքի ստուգման գործընթացում **աշխատանքի հեղինակի նույնականացումը բացառող կարգով:**

Համապատասխան մոդուլից առաջադրանքն ավարտելուց հետո ունկնդիրն իր աշխատանքը տպագրում է երկու օրինակից, որոնց վրա փակցնում է այդ պահին պատահականության սկզբունքով արկղից վերցված ծածկագրերը (շտրիխ կոդ): Ունկնդիրն իր աշխատանքի տպագրված օրինակներից մեկի վրա ստորագրում է ու անձամբ տեղադրում այն կնքված արկղի մեջ, իսկ աշխատանքի մյուս օրինակը, որի վրա առկա է միայն ծածկագիր (շտրիխ կոդը) հանձնվում է որակավորման հանձնաժողովին:

Յուրաքանչյուր տարի երկու անգամ Փաստաբանների պալատում անցկացվում են որակավորման քննություններ:

2017 թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննությանը մասնակցել է 82 հավակնորդ, որից 10-ը հատուկ դիմորդ: Որակավորման քննությունը չի հանձնել 14 հավակնորդ, իսկ որակավորման քննությունները չի վերահանձնել 1 հավակնորդ:

2017 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությանը մասնակցել է 88 հավակնորդ, որից որակավորման քննությունը չի հանձնել 21 հավակնորդ: Որակավորման քննությունը չհանձնած հավակնորդներից 19-ը վերահանձնել է որակավորման քննությունը, իսկ 2-ը չեն հանձնել նաև վերահանձնման որակավորման քննությունները:




➤ **Փաստաբանի հավակնորդների երդման հանդիսավոր արարողությունը.**

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս, փաստաբանը Փաստաբանների պալատի խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում երդում է տալիս: Արդեն ձևավորված ավանդույթի համաձայն Փաստաբանական դպրոցի շրջանավարտներն արտոնագրեր են ստանում հանդիսավոր պայմաններում՝ Փաստաբանների պալատի տարբերանշանով պատմունճաններով և գլխարկներով:





➤ **Փաստաբանական դպրոցում փաստաբան Տիգրան Տեր-Եսայանի անվամբ անվանակոչվել է լսարան.**



2017 թվականի հուլիսի 17-ին Փաստաբանների պալատում կազմակերպվել էր Փաստաբանների միջազգային միության նախագահ, փաստաբան Տիգրան Տեր-Եսայանի մահվան տարելիցին նվիրված հիշատակի միջոցառում, որի շրջանակներում փաստաբան Տիգրան Տեր-Եսայանի անվամբ է անվանակոչվել Փաստաբանական դպրոցի երեք լսարաններից մեկը:

1999 թվականին Հայաստանում տեղի ունեցած դատաիրավական բարեփոխումների արդյունքում Տիգրան Տեր-Եսայանի նախաձեռնությամբ հիմնադրվել է Հայ փաստաբանների միջազգային միությունը, իսկ 2005 թվականի հոկտեմբերին Փաստաբանների միջազգային միության և ՀՀ փաստաբանների միության միաձուլման արդյունքում ստեղծվել է Փաստաբանների պալատը՝ որպես փաստաբանների անկախ և ինքնակառավարվող մասնագիտական միասնական կառույց:

Լսարանի անվանակոչումը Տիգրան Տեր-Եսայանի անվամբ նպատակ է հետապնդել ծանոթացնել ապագա սերունդներին Հայաստանում փաստաբանության զարգացման պատմությանը:

Փաստաբան Տիգրան Տեր-Եսայանի անվամբ անվանակոչված լսարանում փակցվել է նաև հուշատախտակ:




➤ **Գործարկվել է Փաստաբանական դպրոցի վեբ պորտալը.**

<http://www.advschool.am>

2017 թվականից գործարկվել է Փաստաբանական դպրոցի վե՛ր պորտալը, որն իրենից ներկայացնում է ոչ միայն Փաստաբանական դպրոցի կայքէջը, այլ նաև ունկնդիրների համար հանդիսանում է տեղեկատվության ինտերակտիվ ռեսուրս:

Փաստաբանական դպրոցի վեբ պորտալում յուրաքանչյուր ունկնդիր ունի իր անձնական էջը, որտեղ մուտք գործելով՝ ունկնդիրը հնարավորություն ունի ծանոթանալ ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին, դասացուցակին և ուսումնական բեռնվաճությանը, ինչպես նաև հատուկ անանուն հարցաթերթիկի միջոցով մասնակցել դասախոսների գնահատմանը:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

* * *

Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում.

ՀՊԳ գործունեությանն օժանդակելու և հանրությանն անվճար իրավական օգնություն (խորհրդատվություն) տրամադրելու նպատակով Փաստաբանների պալատն իր միջոցներով զարգացնում է *Pro bono* մշակույթը:

Հաշվի առնելով հատկապես քաղաքացիական գործերով և հատկապես Հանրապետության մարզերում բնակչության անվճար իրավական օգնության պահանջարկը, Փաստաբանների պալատն անվճար իրավաբանական խորհրդատվության ծրագիր է իրականացրել նաև մարզերում՝ տեղի կամավոր փաստաբանների, մարզային համակարգողների, ինչպես նաև Երևանից գործուղված փաստաբանների, այդ թվում՝ Փաստաբանների պալատի խորհրդի անդամ փաստաբանների օգնությամբ:



Լուսանկարներ 16.06.2017թ. Փաստաբանների պալատի աշխատակազմի և խորհրդի անդամների կողմից Գյումրիում իրականացրած *pro bono* ծրագրից



* * *

**Մարզերում գործունեություն իրականացնող
փաստաբանների վերապատրաստում.**

Կարևորելով մարզերում գործունեություն իրականացնող փաստաբանների վերապատրաստման հարցը, Փաստաբանների պալատը մարզային փաստաբանների համար կազմակերպում է վերապատրաստման հեռավար դասընթացներ, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում տեղում՝ դասընթացավար գործուղելու միջոցով:

2017 թվականի ընթացքում փաստաբանների համար տեղում վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել Հայաստանի բոլոր մարզերում և այդ դասընթացներին, ընդհանուր առմամբ, մասնակցել է 283 փաստաբան:

* * *

**Փաստաբանների պալատի մարզային համակարգողների գրասենյակներին
և մարզերում գործող փաստաբաններին գրականության տրամադրում.**

Շարունակելով մարզերում գործունեություն ծավալող փաստաբաններին նաև մարզային համակարգողների միջոցով մասնագիտական իրավաբանական գրականություն տրամադրելու իր քաղաքականությունը՝ Փաստաբանների պալատը 2017 թվականի ընթացքում մարզային համակարգողների միջոցով մարզերում գործունեություն իրականացնող փաստաբաններին տրամադրել է 310 թվաքանակով գրականություն (չհաշված անհատական կարգով բոլոր փաստաբաններին տրամադրվող գրականությունը), որն իր մեջ ներառում է ինչպես տեսական աղբյուրներ, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ձեռնարկներ և այլ ուսումնառական նյութեր:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



➤ Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության ակտիվացում.

➤ Փաստաբանների իրավունքների իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, տարածում և քննարկումների կազմակերպում. Հանձնաժողովի աշխատանքների հանրայնացում.

Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության՝ որպես արդարադատության համակարգի ինստիտուտի զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող այլ պետության փաստաբանների իրավունքների պաշտպանությունն ապահովելը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելը: Այդ նպատակով դեռևս 2014 թվականին Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ ստեղծվել էր **փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով**, որի նպատակն է միջոցներ ձեռնարկել փաստաբանների իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից կամ ցանկացած տեսակի այլ հակաիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու համար:

Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովից բացի՝ Փաստաբանների պալատում գործում է նաև արագ արձագանքման հանձնախումբ, որն արձանագրում է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերը կամ փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունները, ինչպես նաև նպաստում է փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման



խոչընդոտները վերացնելուն:

2017 թվականի ընթացքում արձանագրվել են փաստաբանների իրավունքների խախտման հետևյալ դեպքերը.

1. 20.05.2017 թվականին **փաստաբան Ինեսսա Պետրոսյանը** հայտնել է, որ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվում է թիվ ԵԷԴ/0135/01/16 քրեական գործով տուժող՝ Եղիշե Խաչատրյանի իրավահաջորդ Փառանձեմ Մեյթիխանյանի և տուժող Էմմա Աբրահամյանի շահերը ներկայացնում է փաստաբան Ինեսսա Պետրոսյանը: 03.05.2017թ. դատական նիստին պաշտպանական կողմի միջնորդության վերաբերյալ Ինեսսա Պետրոսյանի կողմից դիրքորոշում հայտնելու պահին դատական նիստերի դահլիճում գտնվող որոշ անձինք սկսել են հայիոյանքներով ու այլ արտահայտություններով վիրավորել և սպառնալ իր մասնագիտական պարտականությունները կատարող փաստաբան Ինեսսա Պետրոսյանին: Փաստաբան Ինեսսա Պետրոսյանը 20.05.2017թ. իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է NARINE ARZUMANYAN անվամբ օգտատիրոջ կողմից իրեն ուղղված լատինատառ նամակը՝ իրեն ու իր ընտանիքին ուղղված սպառնալիքներով, որն ավարտվում է «*Ու քեզ չի փրկի ոչ տիկին լեզվաբանը, ոչ էլ իրավապահները: Էտ երդումա մեր կողմից, հիշի ու փախի*» արտահայտությամբ:

Նշված դեպքի կապակցությամբ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը դիմելով ՀՀ ոստիկանապետին՝ խնդրել է պարզել NARINE ARZUMANYAN անվամբ օգտատիրոջ ինքնությունը և սպառնալիքն իրականացնելու իրական վտանգը, ինչպես նաև քրեական հետապնդում իրականացնել ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած անձի կամ անձանց նկատմամբ, և ձեռնարկել փաստաբան Ինեսսա Պետրոսյանի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ:

2. 28.06.2017 թվականին Փաստաբանների պալատը Հայկական ժամանակի տեսանյութից տեղեկացել է, որ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի հարակից տարածքում **փաստաբաններ Լուսինե Սահակյանի և Արա Զաքարյանի** նկատմամբ ոստիկանները ցուցաբերել են բռնի գործողություններ:

Նշված դեպքի կապակցությամբ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը դիմելով ՀՀ ոստիկանապետին՝ խնդրել է նշված միջադեպն ուսումնասիրել և քննարկել մեղավոր ոստիկաններին պատասխանատվության ենթարկելու հարցը:

3. 17.08.2017 թվականին զանգվածային լրատվամիջոցներից պարզ է դարձել, որ փաստաբան Արայիկ Պապիկյանն իր մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված սպառնալիքներ բովանդակող



էլեկտրոնային նամակներ է ստանում, որոնք առնչվում են ոչ միայն իրեն, այլ նաև իր ընտանիքի անդամներին:

Նշված դեպքի կապակցությամբ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը դիմելով ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրել է ձեռնարկել միջոցներ փաստաբան Արայիկ Պապիկյանի և նրա ընտանիքի անդամների նկատմամբ սպառնալիքներ ներկայացրած անձին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:



ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԲԵՐՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2017 թվականի ընթացքում հատկապես աղմկահարույց քրեական գործերի դատական քննության ժամանակ բարձրացվել է դատարանի վարչական շենք մուտք գործելիս փաստաբանների զննության խնդիրը: Փաստաբաններին զննելու դեպքերի հարցը քննարկվել է նաև Փաստաբանների պալատում և այդ հարցի առնչությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ **14.06.2017թ.** ՀՀ փաստաբանների պալատի նախագահը հայտարարությամբ է հանդես եկել նշելով, որ՝

1. դատարանի վարչական շենք մուտք գործելիս փաստաբանը և փաստաբանի իրը կարող է զննության ենթարկվել.
2. անթույլատրելի է փաստաբանին կամ փաստաբանի իրը զննության ենթարկելիս խտրական մոտեցում ցուցաբերել.
3. դատարանի վարչական շենք մուտք գործելիս փաստաբանը չի կարող խուզարկության ենթարկվել:

27.06.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախումբը հայտարարություն է տարածել, որով փաստաբաններին խնդրել է դատական կարգադրիչների կողմից փաստաբանների նկատմամբ զննություն կատարելու փորձերի ժամանակ տեղի ունեցող հնարավոր բացասական միջադեպերն արձանագրելու և կանխելու նպատակով նիստի ժամանակի և վայրի մասին նախապես տեղեկացնել հանձնախմբին՝ Փաստաբանների պալատի ներկայացուցիչների ներկայությունն ապահովելու համար:



30.06.2017թ. Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, խորհրդի անդամներ՝ Կարեն Մեժլումյանը, Հարություն Հարությունյանը և Սիմոն Բաբայանը այցելել են Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենք, որտեղ պետք է տեղի ունենար թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով նիստը:

30.06.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահը գրավոր դիմել է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին առաջարկելով՝ դատարանների շենքերն ապահովել զննության այնպիսի սարքավորումներով, որոնք փաստաբանների զննության ժամանակ կբացառեն կամ նվազագույնի կհասցնեն կարգադրիչների անմիջական միջամտությունը:

12.07.2017թ. ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել ակումբի նիստ, որին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանը, Սիմոն Բաբայանը և Արայիկ Ղազարյանը: Քննարկվել են ինչպես զննության հետ կապված հարցերը, այնպես էլ դատարանի կողմից սանկցիաներ կիրառելու, հանրային պաշտպան նշանակելու, դատարանի կողմից դատական նիստերի դահլիճից հեռացնելու սանկցիայի հաշվարկման հարցերը: Փաստաբանների պալատի խորհրդի ներկա անդամները ձեռնպահ են մնացել կարգապահական վարույթներին առնչվող հարցերի քննարկումից: Ակումբի նիստի ժամանակ, քննարկման արդյունքներով, Պալատի նախագահը տեղեկացրել է, որ զննության հետ կապված հարցը կներկայացնի խորհրդի քննարկմանը, իսկ դահլիճից հեռացնելու մասին դատական սանկցիայի հաշվարկման հարցը կբարձրացվի իրավասու մարմնի առջև:

20.07.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահը դիմել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին, խնդրելով դիմել ՀՀ դատարանների նախագահների խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «նիստերի դահլիճից հեռացնել» դատական սանկցիայի կիրառման համար նախատեսված ժամանակի (ժամի) հաշվարկման կարգը պարզաբանելու նպատակով: Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է դատարանների նախագահների խորհրդին:

21.07.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը որոշում է կայացրել փաստաբանների իրավունքների պաշտպանության վերաբերյալ և վերլուծելով հիշյալ դեպքերը, որոշել է՝



1. Փաստաբաններին զննության ենթարկելու դեպքերի մասով՝

1.1. Արձանագրել, որ՝

- Փաստաբանները քրեական գործերով արդարադատության կայացման հարցում կարևոր և անփոխարինելի սուբյեկտներ են և պետական ծառայողները պարտավոր են փաստաբանների նկատմամբ ցուցաբերել հարգալից վերաբերմունք՝ ղեկավարվելով փաստաբանի բարեխղճության կանխավարկածով.
- Առանց հատուկ սարքերի փաստաբանին զննելու համար դատական կարգադրիչը պետք է ունենա իրավական և փաստական հիմքեր.
- Փաստական հիմքը կարող է լինել այն դեպքում, երբ կա ողջամիտ կասկած, որ փաստաբանը կարող է օրենքով արգելված իրեր տեղափոխել.
- Անթույլատրելի է զննություն կատարելիս դրսևորել խտրական վերաբերմունք փաստաբանների նկատմամբ.
- Չննությունը չի կարող փաստացի վերածվել խուզարկության կամ ստեղծել փաստաբանական գաղտնիքի հրապարակման վրանգ կամ փաստաբանի համար նվաստացուցիչ պայմաններ.
- Անթույլատրելի է դատարանի և դատական կարգադրիչների կողմից՝ փաստաբանի մասնագիտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ իրերը, այդ թվում՝ անվտանգ տարայով խմելու ջուրը, տեղափոխելու արգելքը:

1.2. Առաջարկել ՀՀ դատական դեպարտամենտին՝

- Չննությունը կատարել տեխնիկական միջոցներով (սկանավորմամբ)՝ առանց փաստաբաններին լրացուցիչ անհարմարություն պատճառելու.
- Փաստական հիմքի առկայությամբ փաստաբանի պայուսակի պարունակությունը զննելու դեպքում (եթե փաստաբանը համաձայնվել է անձամբ ցույց տալ պարունակությունը՝ առանց փաստաթղթերի բովանդակությունը բացահայտելու), փաստաբանի պահանջի դեպքում, զննությունը կատարել առանձին սենյակում՝ համապատասխան սեռի դատական ծառայողների և ընթերականների մասնակցությամբ՝ արդյունքների վերաբերյալ կազմելով արձանագրություն երկու օրինակից (մեկ օրինակը հանձնելով փաստաբանին).
- դատական կարգադրիչներին հրահանգել, որ փաստաբանի պայուսակը կամ այլ իրը զննելու դեպքում, դատական կարգադրիչն իրավասու չէ՝ ա) ինքնուրույն որոնողական գործողություններ կատարել, այդ թվում՝ բացել պայուսակը կամ տեղաշարժել պայուսակի մեջ գտնվող իրերը, և բ) որևէ փաստաթղթի բովանդակությանը ծանոթանալ:



2. Կոչ անել փաստաբաններին՝ իրենց վստահորդներին պաշտպանելու հարցում դրսևորել համարձակություն, սկզբունքայնություն և բարեխղճություն՝ պահպանելով Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները:

3. Ընդունել ի գիտություն, որ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջներին համապատասխան գործող փաստաբանն ունի փաստաբանի գործունեության պաշտպանության օրենքով սահմանված երաշխիքները և ՀՀ փաստաբանների պալատի լիարժեք աջակցությունը:

4. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուղարկել ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին և ապահովել որոշման հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

03.08.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչները քննարկել են դատական կարգադրիչների կողմից փաստաբաններին զննության ենթարկելու հետ կապված հարցը և քննարկման արդյունքում կողմերը որոշել են հետևյալ համատեղ հայտարարությամբ հանդես գալ՝

1. Կողմերը կարևորում են դատարանում դատավարության մասնակիցների և դատարանում գտնվող այլ անձանց կյանքի և առողջության պաշտպանության անհրաժեշտությունը, հատկապես քրեական այն գործերով, որոնցով անձինք մեղադրվում են կյանքի և առողջության դեմ ուղղված, ինչպես նաև հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ կատարելու մեջ:

2. ՀՀ դատական դեպարտամենտը հայտարարում է, որ մինչև հատուկ սարքավորումներ ձեռք բերելը փաստաբանների և նրանց իրերի հետ կապված զննությունը դատական այն գործերով, որոնց ժամանակ անհրաժեշտություն է առաջանալու ապահովել դատավարության մասնակիցների և դատարանում գտնվող այլ անձանց կյանքի և առողջության պաշտպանությունը, որպես կանոն իրականացնելու է հետևյալ կերպ՝

- Եթե մեղադրորսիչը ազդանշան է տալիս փաստաբանի կամ նրա մոտ առկա իրերի զննության ժամանակ, ապա փաստաբանին առաջարկվում է հատուկ առանձնացված պահարանում թողնել մեղադրական իրերը և կրկին մեղադրորսիչով զննվել:

- Եթե կրկին մեղադրորսիչը փաստաբանի կամ նրա մոտ առկա իրերի զննության ժամանակ ազդանշան է տալիս, ապա փաստաբանի մոտ առկա իրերի պարունակությունը զննելու դեպքում (եթե փաստաբանը համաձայնվել է անձամբ ցույց տալ պարունակությունը՝ առանց փաստաթղթերի բովանդակությունը



բացահայտելու), փաստաբանի պահանջի դեպքում, զննությունը կատարվելու է առանձին սենյակում՝ համապատասխան սեռի դատական կարգադրիչի (փաստաբանի պահանջի դեպքում նաև նրա կողմից այդ պահին հրավիրած ընթերակայի) մասնակցությամբ՝ արդյունքների վերաբերյալ կազմելով արձանագրություն երկու օրինակից (մեկ օրինակը հանձնելով փաստաբանին)։

- դատական կարգադրիչները փաստաբանի պայուսակը կամ այլ իրը զննելու դեպքում՝ ինչպես նախկինում, այնպես էլ հետայսու ինքնուրույն որոնողական գործողություններ չեն կատարելու և որևէ փաստաթղթի բովանդակությանը չեն ծանոթանալու։

3. Սույն հայտարարությունը չի կարող սահմանափակել կողմերի՝ օրենքով վերապահված իրենց իրավասությունները, այդ թվում՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամների անկախությունը։



2017 թվականի ընթացքում փաստաբանների դեմ հարուցված քրեական գործերը ⁹.

№	Փաստաբանի անունը, ազգանունը	Արդո- նագրի №	ՀՀ քրեական օրենսգրքի հոդված	Տեղեկություններ գործի ընթացքի մասին
1.	Գայանե Գալոյան	272	38-311-րդ հոդվածի 4- րդ մասի 2-րդ կետ	գործը գտնվում է դատական քննության փուլում
2.	Վաղինակ Աթոյան	492	38-34-312-րդ հոդվածի 2-րդ մաս	գործը գտնվում է դատական քննության փուլում
3.	Էդվարդ Չինարյան	288	313-րդ հոդվածի 1-ին մաս	գործը գտնվում է դատական քննության փուլում
4.	Էդուարդ Մանասյան	1934	325-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ, 329.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ	գործը գտնվում է դատական քննության փուլում

⁹ Սույն հաշվետվությունում արտացոլվել են միայն այն քրեական գործերը, որոնց մասին Փաստաբանների պալատը տեղեկացվել է։



**2017 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի
մասնակցությամբ քննվող քաղաքացիական գործերի մասին
համառոտ տեղեկություններ.**

2017 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվել է 59 դատական գործ, որոնցից՝

- 29 դատական գործով Փաստաբանների պալատի խորհրդի որոշումներով կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանները վիճարկել են Փաստաբանների պալատի խորհրդի որոշումները:
- 4 դատական գործով Փաստաբանների պալատի խորհրդի այլ (կարգապահական պատասխանատվության հետ չկապված) որոշումներ.
- 6 դատական գործով վիճարկվել է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին Փաստաբանների պալատի նախագահի որոշումը.
- 8 դատական գործով վիճարկվել է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին Փաստաբանների պալատի նախագահի որոշումը.
- 7 դատական գործով փաստաբանները վիճարկել են այլ հարցեր, օրինակ՝ Փաստաբանների պալատի կողմից տեղեկատվություն չտրամադրելը, որակավորման քննությունները չհանձնած հավակնորդի կողմից իր մասով որակավորման քննության արդյունքները.
- գումարի բռնագանձման պահանջով 5 դատական գործով (այդ թվում վճարման կարգադրություն) հայցվոր (դիմող) է հանդիսացել Փաստաբանների պալատը: Նշված հայցերով Փաստաբանների պալատը ներկայացրել է փաստաբանների կողմից պալատի խորհրդի որոշումներով որպես կարգապահական պատասխանատվության միջոց կիրառված և փաստաբանի կողմից չվճարված տուգանքի գումարի բռնագանձման պահանջներ:



**2017 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի
մասնակցությամբ քննվող քրեական գործերի մասին
համառոտ տեղեկություններ.**

2017 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվել է (շարունակվել է քննվել) թիվ 13816616 քրեական գործը, որով կազմված և դատարանին հանձնված մեղադրական եզրակացության համաձայն Պալատի նախկին գլխավոր հաշվապահ Կարինե Սարգսյանին առաջադրվել է մեղադրանք՝ յուրացման եղանակով Պալատից 134.821.915 ՀՀ դրամ հափշտակություն կատարելու համար: Նշված քրեական գործը ներկայումս գտնվում է դատական քննության փուլում:

Մեղադրական եզրակացության համաձայն՝ քրեական գործով նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների համակցությամբ հիմնավորվել է, որ Պալատի նախկին գլխավոր հաշվապահ Կարինե Սարգսյանը, 2005 թվականի նոյեմբերի 1-ից աշխատելով Պալատում որպես գլխավոր հաշվապահ, հափշտակություն կատարելու միասնական դիտավորությամբ, 2012թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. մարտի 27-ն ընկած ժամանակաընթացքում, յուրացման եղանակով հափշտակել է Պալատին պատկանող առանձնապես խոշոր չափերի 134.821.915 ՀՀ դրամ գումար, այսինքն՝ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

Նշված քրեական գործով Պալատը ճանաչվել է տուժող:

Քրեական գործից բացի, Պալատին պատճառված նյութական վնասը փոխհատուցելու նպատակով ընդդեմ Կարինե Սարգսյանի ներկայացվել է հայցադիմում՝ Պալատի նախագահի հրամանի հիման վրա ձևավորված ստուգող հանձնաժողովի 27.08.2015թ. ստուգման ակտով արձանագրված 97.441.172 ՀՀ դրամի չափով վնասի գումարը բռնագանձելու համար: Նշված քաղաքացիական գործը գտնվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում (թիվ ԵԱԴԴ/2690/02/15 քաղաքացիական գործ), սակայն այս պահին գործի քննությունը կասեցված է՝ մինչև վերոնշյալ քրեական գործով վերջնական որոշում կայացնելը:



ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ

➤ **Փաստաբանների վերապատրաստման համակարգի շարունակական զարգացում.**

Փաստաբանների պալատում շարունակաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ: Փաստաբանների պալատում գործում է փաստաբանների վերապատրաստման երեք հարթակ՝ վերապատրաստման դասընթացներ տեղում՝ Փաստաբանների պալատում կամ Փաստաբանական դպրոցում, հեռավար և առցանց (online) վերապատրաստում:



**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ
ՏԵՂՈՒՄ**



**ՀԵՌԱՎԱՐ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**



**ԱՌՑԱՆՑ (ONLINE)
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

Յուրաքանչյուր ամսվա վերջում Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում և փաստաբաններին էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է հաջորդ ամսվա համար փաստաբանների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:

Յուրաքանչյուր ամսվա ընթացքում Փաստաբանների պալատում կազմակերպվում է միջինը 15-ից 20 վերապատրաստման դասընթաց:

2017 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել




վերապատրաստման 251 անվճար դասընթաց՝ ներառյալ հեռավար և առցանց վերապատրաստման դասընթացները, ինչպես նաև ակումբի նիստերը և Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված հաստատությունների կողմից անցկացվող դասընթացները:

* * *

➤ **Վերապատրաստման գործընթացում փաստաբանների կարիքների բացահայտում և վերապատրաստման արդյունավետության գնահատում.**

Փաստաբանների վերապատրաստման շարունակական զարգացման գործընթացի կարևորագույն նախապայմաններից է փաստաբանների կարիքների գնահատումը:

Վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման նպատակով յուրաքանչյուր դասընթացին մասնակից փաստաբաններին տրվում են գնահատման հարցաթերթիկներ, որոնք անանուն կարգով և կամավորության սկզբունքով լրացվում են փաստաբանների կողմից: Գնահատման հարցաթերթիկում առաջադրված են հետևյալ հարցադրումները՝






Վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման վերլուծությունը՝ 2017 թվականի առաջին կիսամյակի համար

✓ 2017 թվականի առաջին կիսամյակում (հունվարից հունիս) տեղի է ունեցել վերապատրաստման 110 անվճար դասընթաց, որոնց ընթացքում, ընդհանուր առմամբ, վերապատրաստվել են 1072 փաստաբան: Հաշվետու ժամանակահատվածում կամավորության սկզբունքով լրացվել է շուրջ 690 հարցաթերթիկ:

2017 թվականի առաջին կիսամյակի (հունվարից հունիս) ընթացքում լրացված գնահատման հարցաթերթիկում առկա չափանիշներից յուրաքանչյուրի մասով հետազոտության արդյունքները հանգում են հետևյալին.

Թեմայի դասավանդումը փաստաբանի համար՝




Հարցվող փաստաբանների 94%-ը նշել է, որ վերապատրաստման դասընթացի թեմայի դասավանդումը եղել է արդյունավետ իրենց համար: Հարցվածների 5%-ը պատասխանել է, որ թեման մասամբ է արդյունավետ եղել և միայն 1%-ն է նշել, որ դասընթացը արդյունավետ չի եղել:

Նշված ցուցանիշը վկայում է այն մասին, որ մասնակից փաստաբանները հիմնականում գոհ են կազմակերպվող վերապատրաստման դասընթացներից:


Վերապատրաստման դասընթացներից փաստաբանների գոհունակության մասին է վկայում նաև ստորև ներկայացվող ցուցանիշը.



Դասախոսի ներկայացրած նյութը փաստաբանի համար՝




Հարցվող փաստաբանների 93%-ի համար դասախոսի ներկայացված նյութը եղել է հետաքրքիր, 6%-ի համար՝ մասամբ հետաքրքիր, իսկ 1%-ի համար՝ ոչ հետաքրքիր:





Դասընթացների թերության մասին հարցին՝ փաստաբանների **88%-ը պատասխանել է, որ դասընթացը թերությունների չի ունեցել**, 4%-ը՝ դասընթացին պրակտիկ հմտություններ չի ստացել, 3%-ը գտել է, որ գործնական աշխատանքն է բացակայել, 1%-ը նշել է, որ նյութը հետաքրքիր չի եղել, իսկ 4%-ը տվել է այլ պատասխան, որը հիմնականում վերաբերվել է ժամանակի սղության, դասընթացի մասին անհատական կարծիքի արտահայտմանը և լսարանի ակտիվության հարցերի քննարկմանը:


Ինչ վերաբերվում է դասընթացավարներին, ապա փաստաբանները տվել են հետևյալ պատասխանները.



Փաստաբանների 95%-ը համարել է, որ դասախոսը ոչ մի թերություն չի ունեցել, 4%-ը դժգոհել է նյութի ոչ ճիշտ մատուցումից, 0.7%-ի կարծիքով դասախոսը լսարանի հետ չի կարողացել շփվել, 0.1%-ը նշել է, որ դասախոսը համապատասխան մասնագիտական գիտելիքներ չի ունեցել: Հարցվածների 4%-ն այլ պատասխան տալով՝ շեշտել է դասախոսի պրոֆեսիոնալիզմը և անհատական գոհունակությունը կամ դժգոհությունը դասախոսից:




Դասընթացի շրջանակներում ստացած գիտելիքներն արդյո՞ք հետազայում օգտակար կլինեն՝



Հարցաթերթի այն հարցին, որը վերաբերվում է դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների և հմտությունների հետագա կիրառմանը, փաստաբանների **89%-ը** հայտնել է, որ **ստացած գիտելիքները հետագայում իրենց անհրաժեշտ կլինեն**, 4%-ը բացասական պատասխան է տվել, իսկ 7%-ը նշել է, որ ստացած գիտելիքները մասնակի օգտակար կլինեն հետագայում:

Հարցաթերթի վերջին հարցը վերաբերվում է մեկ այլ թեմայի շրջանակներում նույն դասախոսի կողմից վերապատրաստման դասընթաց անցնելուն: Փաստաբանների **92%-ը ցանկություն են հայտնել վերապատրաստվել նույն դասախոսի կողմից անցկացվող մեկ այլ դասընթացի շրջանակներում**, իսկ 8%-ը բացասական պատասխան է տվել:

Արդյո՞ք կցանկանայիք ևս մեկ անգամ վերապատրաստվել նույն դասախոսի կողմից մեկ այլ թեմայի շրջանակներում՝






Վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման վերլուծությունը՝ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համար

✓ 2017 թվականի երկրորդ կիսամյակում (հուլիսից դեկտեմբեր) տեղի է ունեցել **վերապատրաստման 126 անվճար դասընթաց**, որոնց ընթացքում, ընդհանուր առմամբ, վերապատրաստվել են **1177 փաստաբաններ**: Հաշվետու ժամանակահատվածում կամավորության սկզբունքով լրացվել է շուրջ **506 հարցաթերթիկ**:

2017 թվականի երկրորդ կիսամյակի (հուլիսից դեկտեմբեր) ընթացքում լրացված գնահատման հարցաթերթիկում առկա չափանիշներից յուրաքանչյուրի մասով հետազոտության արդյունքները ամփոփված են ստորև ներկայացվող գծապատկերների միջոցով.

Թեմայի դասավանդումը փաստաբանի համար՝




Հարցվող փաստաբանների **92%-ը նշել է, որ վերապատրաստման դասընթացի թեմայի դասավանդումը եղել է արդյունավետ** իրենց համար: Հարցվածների **7%-ը** պատասխանել է, որ թեման մասամբ է արդյունավետ եղել և միայն **1%-ն է նշել, որ դասընթացը արդյունավետ չի եղել**:

Նշված ցուցանիշը վկայում է այն մասին, որ մասնակից փաստաբանները հիմնականում գոհ են կազմակերպվող վերապատրաստման դասընթացներից:


Վերապատրաստման դասընթացներից փաստաբանների գոհունակության մասին է վկայում նաև ստորև ներկայացվող ցուցանիշը.



Դասախոսի ներկայացրած նյութը փաստաբանի համար՝




Հարցվող փաստաբանների 90%-ի համար դասախոսի ներկայացված նյութը եղել է հետաքրքիր, 8%-ի համար՝ մասամբ հետաքրքիր, իսկ 2%-ի համար՝ հետաքրքիր չէր:





Դասընթացների թերության մասին հարցին՝ փաստաբանների **86%-ը պատասխանել է, որ դասընթացը թերությունների չի ունեցել**, 6%-ը՝ դասընթացին պրակտիկ հմտություններ չի ստացել, 3%-ը գտել է, որ գործնական աշխատանքն է բացակայել, 1%-ը նշել է, որ նյութը հետաքրքիր չի եղել, իսկ 4%-ը տվել է այլ պատասխան, որը հիմնականում վերաբերվել է ժամանակի սղության, դասընթացի մասին անհատական կարծիքի արտահայտմանը և լսարանի ակտիվության հարցերի քննարկմանը:


Ինչ վերաբերվում է դասընթացավարների գնահատմանը, ապա փաստաբանները տվել են հետևյալ պատասխանները.



Փաստաբանների 95%-ը համարել է, որ դասախոսը ոչ մի թերություն չի ունեցել, 2%-ը դժգոհել է նյութի ոչ ճիշտ մատուցումից, 0.8%-ի կարծիքով դասախոսը լսարանի հետ չի կարողացել շփվել, 0.2%-ը նշել է, որ դասախոսը համապատասխան մասնագիտական գիտելիքներ չի ունեցել: Հարցվածների 2%-ն այլ պատասխան տալով՝ շեշտել է դասախոսի պրոֆեսիոնալիզմը և անհատական գոհունակությունը կամ դժգոհությունը դասախոսից:




Դասընթացի շրջանակներում ստացած գիտելիքներն արդյո՞ք հետազայում օգտակար կլինեն՝



Հարցաթերթի այն հարցին, որը վերաբերվում է դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների և հմտությունների հետագա կիրառմանը, փաստաբանների **88%-ը հայտնել է, որ ստացած գիտելիքները հետազայում իրենց անհրաժեշտ կլինեն**, 5%-ը բացասական պատասխան է տվել, իսկ 7%-ը նշել է, որ ստացած գիտելիքները մասնակի օգտակար կլինեն հետազայում:

Հարցաթերթի վերջին հարցը վերաբերվում է մեկ այլ թեմայի շրջանակներում նույն դասախոսի կողմից վերապատրաստման դասընթաց անցնելուն: Փաստաբանների **92%-ը ցանկություն են հայտնել վերապատրաստվել նույն դասախոսի կողմից անցկացվող մեկ այլ դասընթացի շրջանակներում**, իսկ 8%-ը բացասական պատասխան է տվել:

Արդյո՞ք կցանկանայիք ևս մեկ անգամ վերապատրաստվել նույն դասախոսի կողմից մեկ այլ թեմայի շրջանակներում՝





* * *

➤ **Փաստաբանների վերապատրաստման ծրագրերի պարբերական արդիականացում՝ հաշվի առնելով նաև փաստաբանների պահանջմունքները.**

Վերոնշյալ կետում ներկայացված գնահատման թերթիկներում նախատեսված է նաև հատուկ հատված, որտեղ վերապատրաստման դասընթացների մասնակիցները կարող են առաջարկել նաև իրենց նախընտրած թեմաները: Փաստաբանները հնարավորություն ունեն իրենց նախընտրած վերապատրաստման թեմաների առաջարկներ ներկայացնել նաև էլեկտրոնային փոստի միջոցով:

«Փաստաբանների վերապատրաստման կարգին» համապատասխան՝ Փաստաբանների պալատի նախագահի կողմից վերապատրաստման դասընթացների թեմաները սահմանվում են կիսամյակային կարգով՝ հաշվի առնելով նաև գնահատման թերթիկներում, ինչպես նաև էլեկտրոնային փոստով փաստաբանների առաջարկած թեմաները:

Յուրաքանչյուր կիսամյակի համար Փաստաբանների պալատի նախագահի համապատասխան որոշումներով հաստատվում են շուրջ 200 վերապատրաստման թեմաներ, որոնք առանձնացված են ըստ իրավունքի տարբեր ճյուղերի՝ քրեական, քաղաքացիական, վարչական և միջազգային իրավունք, ինչպես նաև գիտագործնական և այլ ուղղվածություններին (օրինակ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք (դեոնթոլոգիա), Փաստաբանական գրասենյակի կառավարման առանձնահատկությունները, արդյունավետ բանակցություններ, սթրեսի և կոնֆլիկտների կառավարում և այլն):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փաստաբանների վերապատրաստման համար հաստատված թեմաների գերակշիռ մեծամասնությունը ընտրված են հենց փաստաբանների կողմից ներկայացված առաջարկներից:





ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017 թվականի ընթացքում Փաստաբանների պալատը իրավական ակտ մշակող մարմիններից ստացել և համապատասխան դիրքորոշում է հայտնել ավելի քան 30 իրավական ակտերի վերաբերյալ, որոնցից են՝

- 1) Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք.
- 2) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ.
- 3) «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ.
- 4) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ.
- 5) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ.
- 6) ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ.
- 7) «Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ.
- 8) ««Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»



Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների վերաբերյալ» ՀՀ օրենքի նախագծերի փաթեթ.

9) «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ.

10) «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացում և փոփոխությունների կատարելու մասին» և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», « Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Նույնականացման քարտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ.

11) «Խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական ծառայություններից օգտվելու կարգը և պայմանները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.





ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ - ԱՐՑԱԽ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախի փաստաբանների համար շարունակաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ

Արցախի փաստաբանների պալատի հետ համագործակցության շրջանակներում Փաստաբանների պալատը Փաստաբանական դպրոցի հետ համատեղ Արցախի փաստաբանների համար շարունակաբար կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ՝ ինչպես հեռավար կարգով, այնպես էլ՝ տեղում:

Փաստաբանների պալատի փորձագիտական խումբն ուսումնասիրել է Արցախի հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները.



Աղրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի խաղաղ բնակչության և պաշտպանության բանակի զինվորների նկատմամբ 2016 թվականի ապրիլի 2-ից 5-ն ընկած ժամանակահատվածում կատարված դաժանություններին միջազգային-իրավական գնահատական տալու անհրաժեշտությամբ և հանրությանն Արցախի հիմնահարցի հետ կապված վերլուծություն ներկայացնելու միջոցով Հայաստանի



Հանրապետության պետական իրավասու մարմնին մասնագիտական խորհրդատվությամբ օժանդակելու նպատակով Փաստաբանների պալատը 2016 թվականի ապրիլին ստեղծել էր Արցախի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող փորձագիտական խումբ, որն ուսումնասիրել է հայ-ադրբեջանական հարաբերությունները պատմական և քաղաքական ասպեկտները, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հիմնահարցերը, Ադրբեջանի հակահայկական քաղաքականության դրսևորումները, ինչպես նաև ապրիլյան պատերազմի ընթացքում միջազգային իրավունքի կոպիտ խախտումները:

Փորձագիտական խումբը մշակել և հրապարակել է մասնագիտական կարծիք¹⁰, որում ներկայացված է Ադրբեջանական պետության հայատյաց քաղաքականությունը, Ադրբեջանի կողմից հայկական ծագում ունեցող մարդկանց նկատմամբ ատելության և բռնության դրդելու մասին վկայող՝ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների օբյեկտիվ գնահատականները, ինչպես նաև ներկայացված է ատելության քարոզը զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական ցանցերում:



¹⁰ Մասնագիտական կարծիքին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ http://advocates.am/images/haytararutyunneri_fayler/2017/Masnagitakan_kartsiq.pdf:



Կարծիքում նաև վեր են հանված Ադրբեջանի և, մասնավորապես վերջինիս զինված ուժերի կողմից 2016 թվականի ապրիլի 2-ից 5-ն ընկած ժամանակահատվածում կատարված միջազգային հանցագործությունները, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ խախտումները, քաղաքացիական խաղաղ բնակչության և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ ուղղորդված և նախապես պլանավորված հարձակումների, ինչպես նաև Արցախի պաշտպանության բանակի զինծառայողների նկատմամբ իրականացված անմարդկային վերաբերմունքի դեպքերը:

Փաստաբանների պալատի փորձագիտական խմբի մասնագիտական կարծիքը ներկայացվել է մամուլի ասուլիսի շրջանակներում, հրապարակվել է Փաստաբանների պալատի կայքէջում, տպագրվել է հայերեն և անգլերեն լեզուներով և տրամադրվել Հայաստանի և Արցախի իրավասու պետական մարմիններին, ինչպես նաև Արցախի հիմնահարցով զբաղվող այլ, այդ թվում՝ միջազգային կառույցներին:

«Իրազեկ դպրոց» ծրագրի շրջանակներում Փաստաբանների պալատի ներկայացուցիչն այցելել է Արցախի Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի միջնակարգ դպրոց.

2017 թվականի սեպտեմբերին Արցախի Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի 2002 թվականին հիմնադրված միջնակարգ դպրոցի աշակերտներն «Իրազեկ դպրոց» ծրագրի շրջանակներում հյուրընկալել են Փաստաբանների պալատի ներկայացուցիչն: Փաստաբանների պալատը և փաստաբաններն աջակցել են աշակերտներին գրենական պիտույքներով և գրքերով:





Փաստաբանների պալատի ներկայացուցիչը մասնակցել է Արցախի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի բացմանը:

2017 թվականի նոյեմբերին Փաստաբանների պալատի նախագահի խորհրդական Վրեժ Խաչիկյանը Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հրավերով մասնակցել է Արցախի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի բացման արարողությանը: Կլինիկան ստեղծվել է իրավաբանական ֆակուլտետի ավարտական կուրսի ուսանողների պրակտիկ գործունեությանը նպաստելու և սոցիալապես անապահով խավին անվճար իրավական օգնության տրամադրմանը:

Փաստաբանների պալատը Կլինիկային նվիրել է մասնագիտական գրքեր:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՈՒՄ

Արտերկրում փաստաբանների շարունակական մասնագիտական վերապատրաստման փոխադարձ ճանաչման մասին հուշագիր.

2017 փետրվարի 24-ին Վիենայում տեղի ունեցած համաժողովի շրջանակներում 40 եվրոպական պետությունների փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ ստորագրել են արտերկրում փաստաբանների շարունակական մասնագիտական վերապատրաստման փոխադարձ ճանաչման մասին հուշագրի, որի նպատակն է առավել արդյունավետ դարձնել իրավաբանների շարունակական մասնագիտական վերապատրաստումը Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE) անդամ պետությունների շրջանակներում:

Հուշագիրը ստորագրող կողմերի շարքում են Իսպանիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Վրաստանի, Լեհաստանի, Հյուսիսային Իռլանդիայի, Շվեդիայի, Շոտլանդիայի և մի շարք այլ իրավական համայնքների ներկայացուցիչները:

Փաստաբանների պալատի անունից հուշագիրը ստորագրելու համար լիազորված է եղել Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE) փոխնախագահ Մարիա Սլազակը:





Միջազգային քննարկում օտարերկրյա ներդրումների և գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ.



2017 թվականի ապրիլի 21-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել «Միջազգային գործերի իրավական պաշտպանությունը. Օտարերկրյա գործարարները Հայաստանի Հանրապետությունում և հայ գործարարները արտերկրում» թեմայով միջազգային սեմինար-քննարկում:

2015 թվականի մայիս ամսին Փարիզի փաստաբանների միության նախագահի նախաձեռնությամբ ստեղծված «Փարիզ-Հայաստան» կոմիտեն այս կարճ ժամանակահատվածում արդեն թվով երրորդ միջազգային քննարկում-սեմինարն է նախաձեռնել:

Փարիզի փաստաբանական դպրոցում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության զոհ դարձած հայ փաստաբանների հիշատակին նվիրված հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը.

2017 թվականի մայիսի 3-ին Փարիզի փաստաբանական դպրոցում տեղի է ունեցել հայ նշանավոր գրող, քաղաքագետ, փաստաբան Գրիգոր Զոհրապի և Հայոց Ցեղասպանության զոհ դարձած այլ հայ փաստաբանների հիշատակին նվիրված հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը:

Փաստաբանների պալատը միջոցառմանը ներկայացնում էին



Փաստաբանների պալատի նախագահի միջազգային հարաբերությունների գծով խորհրդական Մարտուն Փանոսյանը և Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանը: Փաստաբանների պալատի պատվիրակությունն իր երախտագիտությունն է հայտնել միջոցառման բոլոր կազմակերպիչներին՝ հատուկ ընդգծելով երկու երկրների փաստաբանական համայնքների միջև առկա գործընկերային և բարեկամական հարաբերությունների բարձր մակարդակը:

Փարիզի փաստաբանների միության նախագահ Ֆրեդերիկ Սիկարն իր ելույթում ընդգծել է հուշատախտակի տեղադրման կարևորությունը՝ նշելով, որ այդպիսով հարգանքի տուրք է մատուցվում բոլոր այն Հայ փաստաբաններին, ովքեր զոհվել են միայն ազգությամբ հայ և փաստաբան լինելու համար:

«ԱՍԱԼԱ» խմբավորման անդամների պաշտպանությունը ստանձնած փաստաբան Անրի Լյուկերն իր ելույթի ընթացքում ընդգծել է հուշատախտակի տեղադրման կարևորությունը ապագա սերունդների համար, մասնավորապես նրա խոսքերով Փարիզի փաստաբանական դպրոցում նշված հուշատախտակի տեղադրումը կարևոր է այնտեղ ուսուցանող ունկնդիրների համար, քանի որ ուսումնառության ամբողջ գործընթացում նրանք կտեսնեն այն:

Ի թիվս այլ հյուրերի, միջոցառմանը ներկա էին Ֆրանսիայի Օ-դը-Սեն նահանգի նախագահ, նախկինում փաստաբան Պատրիկ Դեվեդյանը, Իսսի լե Մուլինո քաղաքի քաղաքապետ Անդրե Սանտինին, Ֆրանսիայի ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Զիտեյանը, Ֆրանսիական Հանրապետության Սենատի անդամ, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Ֆիլիպ Կալտենբախը:





Միջազգային գիտաժողով՝ նվիրված փաստաբանության ժամանակակից մարտահրավերների քննարկմանը.



2017 թվականի մայիսի 12-ից 13-ը Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորած պատվիրակությունը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում մասնակցել է Վրաստանի փաստաբանների միության կողմից կազմակերպված երկրորդ միջազգային գիտաժողովին, որը վերաբերում էր փաստաբանության ժամանակակից մարտահրավերների քննարկման:

Գիտաժողովի բացմանը մասնակցել են նաև Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլին և Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

Գիտաժողովին բացման խոսքերով հանդես են եկել մասնակցող փաստաբանական կառույցների ղեկավարները:

Գիտաժողովը բաղկացած է եղել մի քանի մասերից, որոնցից յուրաքանչյուրում հանդես են եկել ԱՊՀ և Բալթյան երկրների պատվիրակները: Հիմնականում քննարկվել են իրավական գործունեության երաշխիքներն ու առանձնահատկությունները, փաստաբանության միջազգային երաշխիքներին ու համագործակցությանը վերաբերող հարցեր: Քննարկման առանցքում է եղել նաև սոցիալական կայքերի և մեդիայի ազդեցությունը փաստաբանի մասնագիտության և տվյալների պաշտպանության հարցում:

Արա Զոհրաբյանը գործընկերներին է ներկայացրել «Փաստաբանի կարգավիճակի ձեռքբերման ընթացակարգը և մասնագիտական կրթության



չափորոշիչները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով զեկույցը: Զեկույցի հիմքում ՀՀ փաստաբանական դպրոցի կազմավորման, դպրոցի դասընթացների կազմակերպման և միջազգային փորձի վրա հիմնված կրթական ծրագրային առանձնահատկություններն են եղել:

Գիտաժողովին ծավալված քննարկման արդյունքում մասնակից երկրների պատվիրակները բարձր են գնահատել Հայաստանի փաստաբանական համայնքի և փաստաբանական դպրոցի ներկա վիճակը՝ ընդգծելով դրանց ինստիտուցիոնալ առավելությունները:

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» համագործակցության հուշագիր.

2017 թվականի մայիսին Հոնկոնգի իրավաբանական համայնքի (փաստաբանների միություն) 110 ամյակին նվիրված պաշտոնական միջոցառումների շրջանակներում Փաստաբանների պալատը միացել է մասնակից երկրների միջև ստորագրվող՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» համագործակցության հուշագրին, որը նպատակաուղղված է 24 իրավական համակարգերի իրավաբանների, փաստաբանների միությունների շրջանում համագործակցության խթանմանը, տեղեկատվության և գիտելիքների փոխանակման հարթակի ստեղծմանը:



Հուշագրով ամրագրված են համագործակցության հետևյալ 4 ուղղությունները.

- ✓ Փաստաբանների միությունների ներգրավում՝ համագործակցությունը և փոխգործակցությունը խթանելու նպատակով.
- ✓ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանն առնչվող օրենքների կատարելագործման հարթակի ստեղծում.
- ✓ համագործակցության ցանցի և բիզնես ուղղորդումների համայնքի հիմնում.



✓ Ամենամյա կամ երկամյա կոնֆերանսների անցկացում՝ ուղղված ոլորտում առկա խնդիրները քննարկելուն, նոր գաղափարներ ներկայացնելուն, մարտահրավերներին և հնարավորություններին արձագանքելուն.

■ Մարդկության իրավունքների վերաբերյալ հուշագիր.

2017 թվականի հունիսի 30-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքի փաստաբանների միության աշխատանքային տարվա հանդիսավոր բացման արարողության շրջանակներում միջոցառմանը ներկա տարբեր պետությունների փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ ստորագրել են մարդկության իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Նշված փաստաթղթով ամրագրվում է մարդկության՝ էկոլոգիապես մաքուր միջավայրում ապրելու իրավունքը, բնական, մշակութային, նյութական և ոչ նյութական ժառանգության պաշտպանվածության իրավունքը և այլ իրավունքներ, որոնք պետք է նպաստեն շրջակա միջավայրի պահպանման նպատակով ձեռնարկվող լրացուցիչ միջոցները:

Հռչակագիրը ստորագրող կողմերն են եղել ՀՀ փաստաբանների պալատը, Ֆրանսիայի փաստաբանական համայնքների ազգային խորհուրդը, Համբուրգի, Մալիի, Լուքսեմբուրգի, Ալժիրի, Լիբանանի, Բուրկինա Ֆասոի, Իտալիայի, Բելգիայի, Թունիսի, Կիպրոսի, Սոֆիայի, Շվեյցարիայի և Սենեգալի փաստաբանական միությունները:

■ Հանդիպում ԱՄՆ-ի հայ իրավաբանների միության խորհրդի անդամի հետ.

2017 թվականի հուլիսի 28-ին Փաստաբանների պալատը հյուրընկալել է ԱՄՆ-ի հայ իրավաբանների միության խորհրդի անդամ, նույն միության հայերի իրավունքների պաշտպանության կոմիտեի համաատենապետ, փաստաբան Գարո Ղազարյանին:

Փաստաբանների հետ հանդիպման հիմնական ուղղվածությունը «Փաստաբանի մասնագիտությունը և վարքագիծը ԱՄՆ-ում» թեմայով քննարկումն էր:

Գարո Ղազարյանը, ողջունելով գործընկերներին, նշել է, որ կարևոր է փաստաբանի մասնագիտությունը, հատկապես այն երկրներում, որտեղ ժողովրդավարական արժեքները նոր են սերմանվում: Այս պարագայում փաստաբան մասնագետի կայանալը մեծ նշանակություն և առաջնահերթություններ ունի:

Նա ներկայացրել է Միացյալ Նահանգներում փաստաբանների



աշխատանքի առանձնահատկությունները, մասնագիտական էթիկայի կանոնները: Մասնագիտական վարքագծի կանոնների վերաբերյալ փաստաթանների մի շարք հարցերին անդրադառնալով՝ Գարո Ղազարյանն ընդհանրական մեկնաբանություններ է արել՝ մասնավորապես նշելով, որ Վարքագծի կանոնները տարածվում են փաստաթանի մասնագիտական, հանրային, իսկ որոշ դեպքերում՝ նաև անձնական կյանքի վրա: Ըստ Ղազարյանի՝ Միացյալ Նահանգներում փաստաթանը համարվում է արդարադատության սպա, որը արդարադատության իրականացման կարևոր օղակն է և հաշվետու է հանրությանն իր գործողությունների համար:



Միջազգային կլոր-սեղան քննարկում Փաստաթանների պալատում.

2017 թվականի հոկտեմբերի 12-ին Փաստաթանների պալատում տեղի է ունեցել միջազգային կոնֆերանս՝ նվիրված բաժնետիրական ընկերությունների և փաստաթանների մասնագիտական ապահովագրության թեմաներին:

Քննարկումը կազմակերպվել էր Փաստաթանների պալատի, «Իրավունք և Առևտուր» ֆրանսիական կազմակերպության, Հայաստանում Ֆրանսիական համալսարանի, Հայաստանում ֆրանկոֆոն փաստաթանների միության և



Հայաստանի Սենգոր ամբիոնի կողմից:

Միջոցառման առաջին հատվածում քննարկվել են բաժնետիրական ընկերությունների ստեղծման և զարգացման ուղղությունները հայ և ֆրանսիական իրականությունում:

Քննարկման երկրորդ մասում մասնակիցներն անդրադարձել են փաստաբանների մասնագիտական պատասխանատվության ապահովագրության ինստիտուտին:

Ֆրանսիացի հյուրերը Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանի հետ միասին Փաստաբանների պալատի նախագահի ուղեկցությամբ շրջայց են իրականացրել պալատի շենքում՝ լինելով Փաստաբանական դպրոցում և հանրային պաշտպանի գրասենյակում:



Համաժողով՝ նվիրված փաստաբանական ոլորտում առկա խնդիրներին.

2017 թվականի նոյեմբերին Եվրոպայի Խորհրդի Երևանի գրասենյակի հրավերով, Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Նելլի Հարությունյանը և փաստաբան Տիգրան Հայրապետյանը մասնակցել են Ուկրաինայի փաստաբանական ոլորտում առկա խնդիրներին նվիրված Համաժողովին (կոնֆերանսին):

Համաժողովին, հայաստանյան պատվիրակությունից բացի, մասնակցել են նաև միջազգային փորձագետներ՝ Ֆրանսիայից, Դանիայից, Լյուքսեմբուրգից:



Համաժողովի ընթացքում քննարկվել են ինչպես Ուկրաինայի փաստաբանական ոլորտում առկա խնդիրները, այնպես էլ ընդհանրապես դատարանների բնականոն գործունեությունն ապահովող գործընթացներում հանդիպող որոշ գործնական խնդիրներ:

Համաժողովի ընթացքում, ի պատասխան առաջադրված հարցադրումների, միջազգային փորձագետները փաստել են, որ դատարան մուտք գործող անձանց զննությունը, ինչպես նաև որոշ երկրներում իրականացվող խուզարկությունը համապատասխանում է միջազգային պայմանագրերի (Կոնվենցիաների) պահանջներին և հետապնդում է կանխարգելիչ նպատակ: Ավելին, նշվեց, որ այն պետք է իրականացնել նաև տեխնիկական ժամանակակից միջոցների գործադրմամբ այնպիսի եղանակներով, որպեսզի բացառվի պահպանվող տարածք արգելված իրերի ներս բերելը:

■ Ռուսաստանի փաստաբանների պալատի հետ համադրել հեռավար դասընթաց.

2017 թվականի նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի և Եվրոպայի խորհրդի HELP¹¹ ծրագրի հետ համագործակցության

¹¹ Իրավունքի ոլորտի մասնագետների ուսուցում մարդու իրավունքների վերաբերյալ:



շրջանակներում Փաստաբանների պալատում մեկնարկել է «Ընտանեկան իրավունքը և մարդու իրավունքները: Երեխաների և մեծահասակների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները» թեմայով փաստաբանների համար նախատեսված հեռավար դասընթաց:



Դասընթացի նպատակն է ընտանեկան իրավունքի վերաբերյալ ներպետական և միջազգային պրակտիկայի համատեղ քննարկումը, դերաբաշխման միջոցով Հայաստանի և Ռուսաստանի փաստաբաններին միևնույն խնդրահարույց դատական պրակտիկային անմիջական մասնակից դարձնելը և ուսումնական հարթակում երեխայի լավագույն շահի պաշտպանության համար ստեղծված մարզող դատախազին (moot court) մասնակցելը:

Այս նախաձեռնության շրջանակներում վերապատրաստման հեռավար դասընթացը զուգահեռաբար ընթացել է նաև Ռուսաստանի Դաշնությունում և երկու երկրի 30 փաստաբան տեսակապի միջոցով իրական ժամանակահատվածում համատեղ իրավական վարժանքների են մասնակցել: Դասընթացը տևել է 3 ամիս, իսկ դասընթացի ամփոփումն իրականացվել է Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանում և փաստաբաններին հանձնվել են հավաստագրեր:



Փաստաբանների պալատը հյուրընկալել է Գերմանիայի Թուրինգիա քաղաքի փաստաբանների պալատի նախագահին.

2017 թվականի դեկտեմբերի 12-ին և 13-ին Փաստաբանների պալատը Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համագործակցության շրջանակներում հյուրընկալել է Գերմանիայի Թուրինգիա քաղաքի փաստաբանների պալատի նախագահ՝ Յան Հելգե Բեթթելին, ինչպես նաև IRZ ծրագրերի մենեջեր Ամալիա Վուբերթին:

Այցի ընթացքում պարոն Բեթթելը հայ փաստաբանների համար վարել է վերապատրաստման դասընթաց՝ Փաստաբանների վարքագծի կանոնների (փաստաբանների մասնագիտական իրավունքի) վերաբերյալ:

Վերապատրաստման ընթացքում պարոն Բեթթելը ներկայացրել է Գերմանիայի արդարադատության համակարգը, ինչպես նաև Գերմանիայի փաստաբանության հիմունքները:



Պարոն Բեթթելը հայ փաստաբաններին ներկայացրել է նաև փաստաբանների և վստահորդների, փաստաբանների և դատարանների փոխհարաբերությունների վերաբերյալ Գերմանիայում գործող կարգավորումները, ինչպես նաև խոսել է Գերմանիայում փաստաբանների հոնորարների ձևավորման և վճարման հետ կապված հարցերից և փաստաբանի առօրյա աշխատանքում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաներից և համակարգչային ծրագրերից:



ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

■ ԱԿՈՒՄՔ

2017 թվականին շարունակել է իր գործունեությունը Փաստաքանների պալատի ակումբը՝ կազմակերպելով 10 քննարկում:

Փաստաքանների պալատի ակումբի նիստում քննարկվել են ««Փաստաքանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, Դատական կարգադրիչների կողմից փաստաքաններին զննելու և փաստաքանների կողմից դատական նիստերի դահլիճը լքելու իրավաչափության հարցերը, հաշտարարությունը, որպես վեճերի լուծման այլընտրանքային միջոց և արդարադատությանը օժանդակող ինստիտուտ և այլ հարցեր:

Ընդհանուր առմամբ 2017 թվականի ընթացքում Փաստաքանների պալատի ակումբի քննարկումներին մասնակցել է **260 փաստաքան**:

■ ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2017 թվականի ընթացքում իր ակտիվ գործունեությունն է շարունակել Փաստաքանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը:

2011 թվականից սկսած գիտավերլուծական կենտրոնը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն սահմանադրական դատարանում քննվող գործերով որպես երրորդ կողմի կարծիք (amicus curiae) ներկայացնում է իր գրավոր մեկնաբանությունը՝ վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ:

2017 թվականի ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանին **13 գործով** Փաստաքանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը տրամադրել է գրավոր մեկնաբանություն:

■ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դեռևս 2016 թվականին Փաստաքանների պալատի նախագահի որոշմամբ ձևավորվել է Փաստաքանների պալատի երիտասարդական խորհրդի նոր կազմը՝



փաստաբան Ինեսա Պետրոսյանի նախագահությամբ: Երիտասարդական խորհրդի անդամներ են նշանակվել փաստաբաններ Ռուզաննա Ազրոյանը, Աշոտ Խլոյանը, Դավիթ Սրապիոնյանը, Կարո Ասատրյանը, Վահե Տիգրանյանը և Զարուհի Հայրապետյանը:

Երիտասարդական խորհուրդն իր գործունեությունը շարունակել է նաև 2017 թվականին: 2017 թվականի ընթացքում Երիտասարդական խորհրդի կարևոր նախաձեռնությունը եղել է երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրին կազմակերպումը¹²:

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2016 թվականի ընթացքում փաստաբանների համար կազմակերպել է մարզական միջոցառումներ:

✓ Հեծանվային արշավ.

Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2017 թվականի հունիսին Երևանի բուսաբանական այգում փաստաբանների համար կազմակերպել էր հեծանվային արշավ:



✓ Վոլեյբոլի մրցաշար.

2017 թվականի ապրիլին Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը կազմակերպել էր փաստաբանների վոլեյբոլի մրցաշար: Փաստաբանները և Փաստաբանական դպրոցի ունկնդիրներն իրենց ուժերն են փորձել այդ մարզաձևում: Մրցաշարի մրցավարությունն իրականացրել է պրոֆեսիոնալ մրցավարը: Մրցաշարի մասնակիցները երեք թիմերի կազմում զբաղեցրել են 1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերը:

¹² Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի վերաբերյալ մանրամասն տես՝ հաշվետվության 80-81 էջերում:



Լուսանկարներ փաստաթղթերի ֆոնդի մրցաշարից





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

■ Հաղթանակի և խաղաղության տոնը Փաստաբանների պալատում

Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ Փաստաբանների պալատը 10.05.2017 թվականին կազմակերպել էր Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած վետերան-փաստաբանների մեծարման միջոցառում:

Փաստաբանների պալատի վետերան-փաստաբաններ՝ Նարիման Միրզաբեկյանը (93 տարեկան), Մայիս Ավետիսյանը (92 տարեկան) և Հրաչիկ Գոգինյանն (92 տարեկան) այն հազարավոր հայորդիների շարքերում էին, ովքեր ներկայացել են շրջանային զինկոմիսարիատներ ու կամավոր զինվորագրվել հայրենիքի պաշտպանությանը:

Յուրաքանչյուր տարի Փաստաբանների պալատում հավաքվելու գեղեցիկ ավանդույթը գնահատելով՝ վետերանները նշել են, որ մշտապես հետևում են փաստաբանական համայնքի նորություններին, ուրախանում են փաստաբանների գրանցած հաղթանակներով:





**Երեխաների պաշտպանության միջազգային օրը
Փաստաբանների պալատում**



**Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով
01.06.2017 թվականին կազմակերպված միջոցառման լուսանկարներ**



Արդեն իսկ ձևավորված ավանդույթի համաձայն Փաստաբանների պալատը յուրաքանչյուր տարի նշում է երեխաների պաշտպանության միջազգային օրը:

2017 թվականի հունիսի մեկին Փաստաբանների պալատի վարչական շենքում կազմակերպվել էր Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում:

Փաստաբանների պալատը «Մանանա» մանկապատանեկան կրթամշակութային կենտրոնի հետ համատեղ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ հայտարարել էր մրցույթ 7-ից 17 տարեկան երեխաների համար: Մրցույթն անցկացվել է երեք անվանակարգերում՝ լուսանկարներ, էսսեներ և ֆիլմերի սցենարներ: Լուսանկարչական մրցույթի խորագիրն է եղել «Հայաստանի երեխաները», էսսեների մրցույթի թեման է եղել «Իմ իրավունքները և ինչպես են դրանք պաշտպանվում», իսկ ֆիլմի սցենարների մրցույթը կազմակերպվել էր «Երեխաների իրավունքները» խորագրով:

Մրցույթի մեկնարկից սկսած մինչև ավարտը հանրապետության բոլոր մարզերից 7-ից 17 տարեկան երեխաներից ու պատանիներից ստացվել էր 50-ից ավելի հայտ: Պրոֆեսիոնալ ժյուրին տարբեր տարիքային խմբերում նախատեսել էր մրցանակային տեղեր, մրցանակային տեղերից դուրս խրախուսվել էին նաև որոշ աշխատանքներ: Հայտարարված մրցույթին իրենց մրցանակներով միացել էին Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը, Հայ գրողների միությունը, «ԱՐԱՏՏԱ» իրավախորհրդատվական կազմակերպությունը, «Save the Children Armenia» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունը:

Միջոցառման ծրագիրը ներառել է նաև ժամանցային ծրագիր՝ տարբեր տարիքային խմբերի երեխաների համար:

■ Փաստաբանների պալատը նոր փաստաբաններին ապահովում է աշխատասենյակով

Փաստաբանների պալատում 2017 թվականի հունիսի 7-ին բացվել է 20 երիտասարդ փաստաբանի համար նախատեսված աշխատասենյակ:

Աշխատասենյակը կահավորվել է համակարգիչներով և այլ անհրաժեշտ տեխնիկայով և պետք է հանձնվի Փաստաբանական դպրոցը նոր ավարտած փաստաբաններին՝ երիտասարդ փաստաբաններին օժանդակելու ծրագրի շրջանակներում: Աշխատասենյակն օգտագործելու իրավունք ունեցող փաստաբանների (շահառուների) ընտրությունը կազմակերպում է Փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը:



Աշխատասենյակի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել են ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը, «Սիմոնյան» հիմնադրամի նախագահ, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի համահիմնադիր Սեմ Սիմոնյանը, «Թումո» կենտրոնի գործադիր տնօրեն Մարի Լու Փափազյանը, փաստաբանների պալատի խորհրդի անդամներ և այլ հյուրեր:

Աշխատասենյակն օգտագործելու իրավունք ստացած փաստաբաններն այդ աշխատասենյակում իրենց անձնական գործերն են վարելու, իսկ դրան զուգահեռ որոշակի քանակի գործեր պետք է վարեն անվճար: Անվճար իրավաբանական օգնության հետ կապված հարցերով փաստաբանները համագործակցելու են հանրային պաշտպանի գրասենյակի հետ:

Այս նախաձեռնությունը նպաստում է ոչ միայն սկսնակ փաստաբանների՝ համայնքում ինտեգրմանը, այլ նաև pro bono մշակույթի զարգացմանը:





Հայաստանի փաստաբանները հնարավորություն ունեն ուսուցում անցնելու Փարիզի փաստաբանական դպրոցում

Փարիզի փաստաբանների պալատի նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի Հայաստանի ֆրանկոֆոն փաստաբաններից երկուսը մրցութային կարգով հնարավորություն են ստանում մասնակցել Փարիզի փաստաբանների պալատի կողմից կազմակերպվող «Միջազգային ստաժ» կրթական ծրագրին:

Նշված ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր պետության փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ՝ ըստ տվյալ պետության համար հատկացված քվոտաների քանակի (Հայաստանի համար հատկացված է երկու տեղ), հնարավորություն ունեն մասնակցելու երկամսյա կրթական ծրագրին, որի շրջանակներում ծրագրին մասնակցող փաստաբանը մեկ ամիս տեսական ուսուցում է անցնում Փարիզի փաստաբանական դպրոցում իրավունքի ոլորտի տարբեր դասընթացների վերաբերյալ, իսկ հաջորդ մեկ ամսվա ընթացքում՝ անցնում է գործնական պրակտիկա՝ Փարիզի փաստաբանական գրասենյակներում:

2017 թվականի համար ծրագիրն իրականացվել է ոչ միայն ֆրանսերեն, այլ նաև՝ անգլերեն լեզվին տիրապետող փաստաբանների համար: Փաստաբանների պալատը նույնպես ներկայացված է եղել ծրագրին, որին մասնակցելու համար հայտարարված մրցույթը հաղթահարել և դասընթացներին մասնակցել է **փաստաբան Ռուզաննա Աբրահամյանը (արտոնագիր № 1853):**

2017 թվականի դրությամբ նշված ծրագրին Հայաստանից մասնակցել է **11 փաստաբան:** Ծրագրին հայ փաստաբանները հնարավորություն են ունեցել մասնակցելու բարերար Ռայմոն Եզեգեյանի աջակցությամբ, քանի որ վերջինս ծրագրին մասնակցողներին ապահովել է կացարանով, ինչպես նաև լրիվ կամ մասնակի աջակցել է ինքնաթիռի տոմսի արժեքի վճարման հարցում:



Փաստաբաններին շարունակաբար տրամադրվում է մասնագիտական գրականություն.

Փաստաբանների պալատն իր գործընկերներից շարունակաբար ստանում է մասնագիտական գրականություն, որը տրամադրում է փաստաբաններին:

2017 թվականի ընթացքում Փաստաբանների պալատը շուրջ 600 փաստաբանի տրամադրել է «ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում



արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը» վերտառությամբ ուղեցույց ձեռնարկը՝ կից սկավառակով, շուրջ 1000 փաստաթանի է տրամադրվել նաև այլ գրականություն, ուսումնաօժանդակ նյութեր, իրավական ակտեր և այլն: Գրականություն է տրամադրվել նաև Արցախի Հանրապետության փաստաթանների պալատին:

■ Փաստաթանների համար կազմակերպվել է սրտի անվճար հետազոտություն

2017 թվականի հուլիսին Փաստաթանների պալատը Ժորժ Պոմպիդուի անվան Փարիզի եվրոպական հիվանդանոցի սիրտ-անոթային ավագ վիրաբույժ Լևոն Խաչատրյանի և Էրեբունի Սրտաթանական կենտրոնի ղեկավար, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր սրտաբան, Երևանի պետական բժշկական համալսարանի պրոֆեսոր Համլետ Հայրապետյանի աջակցությամբ հանդես եկավ նոր նախաձեռնությամբ, որի շրջանակներում բժիշկներ Լևոն Խաչատրյանը և Համլետ Հայրապետյանը փաստաթանների համար անվճար անցկացրեցին սրտի հետազոտություն և տրամադրեցին բժշկական խորհրդատվություն:



Նշված նախաձեռնության շրջանակներում փաստաթանների համար կազմակերպված անվճար հետազոտությունն ընդգրկել է հետևյալ բժշկական ծառայությունները՝ 1. սրտի կրծքավանդակի գնահատում, 2. էլեկտրասրտագրություն, 3. սրտի փականների վիճակի գնահատում, 4. աորտայի զննում, 5. էխոգրաֆիկ հետազոտություն և 6. խորհրդատվություն:

Այս նախաձեռնության շրջանակում հետազոտվել է **26 փաստաթան:**

■ Կայացել է փաստաթանական գրասենյակների ղեկավարների հանդիպումը

2017 թվականի հոկտեմբերի 11-ին Փաստաթանների պալատում տեղի է ունեցել փաստաթանական գրասենյակների ղեկավարների հետ հանդիպում:

Հանդիպմանը փաստաթանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ներկայացրել է փաստաթանական գրասենյակների ակումբ ստեղծելու, էքսպո



ցուցահանդես կազմակերպելու և փաստաբանական գրասենյակների արդյունավետ գործունեության հետ կապված այլ հարցեր, որոնք քննարկվել են մասնակիցների կողմից:

Ելույթներով հանդես են եկել փաստաբանական գրասենյակների ղեկավարներ (ներկայացուցիչներ) փաստաբաններ Արմեն Տեր-Տաճատյանը, Թաթուլ Խուդատյանը, Արթուր Դավթյանը, Տարոն Սիմոնյանը, Կարեն Սարգսյանը, Սեդրակ Ասատրյանը, Կարեն Աղաջանյանը, Վանիկ Մարգարյանը, Հայկ Էդիսոնի Հարությունյանը, Հայկ Հովհաննիսյանը:

Առաջարկվել է փաստաբանական գրասենյակների ակումբ ստեղծել, որպես ազատ քննարկումների հարթակ, առանց կազմակերպչական հատուկ կառուցվածքի:



Փաստաբանական գրասենյակների էքսպո ցուցահանդեսը կազմակերպելու գաղափարն ընդունելով՝ մասնակիցները որոշել են լրացուցիչ քննարկումներով սահմանել անցկացման ձևաչափը և պայմանները:

Քննարկվել են նաև փաստաբանական գրասենյակների զարգացմանը խոչընդոտող որոշ հարցեր, մասնավորապես դատական ծախսերի մեջ ներառող փաստաբանի վարձատրության ողջամիտ վճարի սահմանման հարցում դատարանների ոչ միատեսակ մոտեցումը, պետական մարմինների կողմից փաստացի «խորհրդատվական ծառայություններ» մատուցելու միջոցով իրավական դաշտը խեղաթյուրելու բացասական երևույթը և այլ հարցեր:



**■ Փաստաբան Գառնիկ Թուխտարյանը պարգևատրվել է
«Փաստաբանության Ասպետ» ոսկե մեդալով:**



2017 իրականացրին Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի որոշմամբ երկարամյա աշխատանքի, մասնագիտական բացառիկ կարողությունների և փաստաբանական ինստիտուտում ներդրած ավանդի համար փաստաբան Գառնիկ Թուխտարյանը պարգևատրվել է «Փաստաբանության ասպետ» ոսկե մեդալով:

Պարգևատրման հանդիսավոր արարողությանը մասնակցել են Փաստաբանների պալատի խորհրդի անդամները, փաստաբանի ընտանիքի անդամները և փաստաբան գործընկերները:

**■ Պարգևատրումներ 20-ամյա փաստաբանական
գործունեության համար**

2017 թվականի նոյեմբերի 10-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել պարգևատրման արարողություն: Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը փաստաբանական 20 ամյա գործունեության համար պատվոգրեր է շնորհել փաստաբաններ Սարո Պողոսյանին, Անժելա Հոբոսյանին, Հրանտ Հովհաննիսյանին, Կրոմվել Գրիգորյանին, Լիանա Սարգսյանին, Անահիտ Գյոզալյանին, Անժելիկա Հակոբյանին, Համազասպուհի Գրիգորյանին, Լուսինե Օհանյանին, Վահան Ենգիբարյանին, Թամարա Յայլոյանին, Քրիստինե Նաղդալյանին, Կարեն Խաչատրյանին, Թորոս Իսկուդարյանին, Կարեն Քամալյանին, Արմենուհի Առաքելյանին, Հակոբ Անդրիասյանին և Անահիտ Ավագյանին:



**Ապրիլյան պատերազմին մասնակցած փաստաբանները
պարգևատրվել են Երկրապահ Կամավորականների Միության
հոբելյանական շքանշանով.**

2017 թվականի դեկտեմբերի 26-ին Փաստաբանների պալատի անդամներ, 2016 թվականի ապրիլյան պատերազմի մասնակից կամավորներ Կարեն Կիրակոսյանը, Վրեժ Խաչիկյանը, Վարդան Գիլոյանը, Արսեն Մկրտչյանը և Տարոն Բաղդասարյանը ԵԿՄ վարչության կողմից պարգևատրվել են Երկրապահ կամավորականների միության «5-րդ բրիգադ 25 տարի» հոբելյանական մեդալով: ԵԿՄ պարգևը փաստաբաններին է փոխանցել Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը՝ նշելով, որ փաստաբանական համայնքում բարձր են գնահատում հայրենիքի պաշտպանությանն անմիջական մասնակցություն ունեցած իրենց գործընկերների ջանքերը:



Ամանորին ընդառաջ փաստաբանները խրախուսվել են մի շարք անվանակարգերում

2017 թվականի դեկտեմբերի 22-ին Փաստաբանների պալատում Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին ընդառաջ կազմակերպվել էր տոնական միջոցառում: Մասնագիտական համայնքի համար նախատեսված միջոցառման պաշտոնական մասում Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի կողմից փաստաբաններին հանձնվել են խրախուսական պատվոգրեր:

Պատվոգրեր նախատեսվել են մի շարք անվանակարգում՝ Փաստաբանական երկարամյա գործունեության համար պատվոգրեր են ստացել 30 և ավելի տարիներ փաստաբանական գործունեություն ծավալած հետևյալ փաստաբանները՝

- 1) Մելսիկ Աղալոյանը (արտոնագիր թիվ 123).
- 2) Մխիթարյան Սուսաննա (արտոնագիր թիվ 136).
- 3) Մելսիկ Գրիգորյանը (արտոնագիր թիվ 173).
- 4) Լևոն Գոգինյանը (արտոնագիր թիվ 180).
- 5) Վահե Մարգարյանը (արտոնագիր թիվ 188).
- 6) Գրիշա Հովհաննիսյանը (արտոնագիր թիվ 189).
- 7) Հենրիկ Մաղաքյանը (արտոնագիր թիվ 190).
- 8) Զոյա Հակոբյանը (արտոնագիր թիվ 191).
- 9) Ալբերտ Քարամյանը (արտոնագիր թիվ 192).
- 10) Սիրվարդ Բաղդամյանը (արտոնագիր թիվ 193).



- 11) Ալվարդ Նահապետյանը (արտոնագիր թիվ 194).
- 12) Սուսաննա Հակոբյանը (արտոնագիր թիվ 196).
- 13) Սոֆյա Մալաքյանը (արտոնագիր թիվ 198).
- 14) Արմենուհի Գևորգյանը (արտոնագիր թիվ 200).
- 15) Տիգրան Սահակյանը (արտոնագիր թիվ 202).
- 16) Անահիտ Բրուտյանը (արտոնագիր թիվ 203).
- 17) Արայիկ Ղազարյանը (արտոնագիր թիվ 204).
- 18) Մայիս Ավետիսյանը (արտոնագիր թիվ 205).
- 19) Ռոբերտ Գրիգորյանը (արտոնագիր թիվ 211).
- 20) Նաիրա Խաչիկյանը (արտոնագիր թիվ 213).
- 21) Թամարա Մելքոնյանը (արտոնագիր թիվ 215).
- 22) Հակոբյան Սարգիս (արտոնագիր թիվ 275).
- 23) Հերբերտ Չոմարյանը (արտոնագիր թիվ 471).
- 24) Ռազմիկ Թովմասյանը (արտոնագիր թիվ 483):





Ամանորին ընդառաջ պատվոգրով պարգևատրվել են նաև հանրային պաշտպանները. Լուիզա Հարությունյանը (արտոնագիր թիվ 308)՝ մարզում երկարատև հանրային պաշտպանություն իրականացնելու համար, Էմին Բեգլարյանը (արտոնագիր թիվ 1400) և Թամարա Բաղդասարյանը (արտոնագիր թիվ 1006)՝ Երևանում լավագույն հանրային պաշտպանություն իրականացնելու համար պատվոգրեր են հանձնվել, Էդուարդ Աղաջանյանը (արտոնագիր թիվ 134)՝ 2017 թվականին արդարացման ամենաշատ դատական ակտեր ունենալու համար, Լիաննա Գասպարյանը (արտոնագիր թիվ 1773)՝ 2017 թվականին մասնագիտական ակտիվ գործունեության համար, Լիաննա Գրիգորյանը՝ 2017 թվականին մարզերի շրջանակներում լավագույնս հանրային պաշտպանություն իրականացնելու համար:

Պատվոգրեր են հանձնվել նաև փաստաբաններ Ադելինա Հակոբյանին (արտոնագիր թիվ 253), Լևոն Թորոսյանին (արտոնագիր թիվ 1027) և Աստղիկ



Ղազարյանին (արտոնագիր թիվ 210) 2017 թվականին մարզային համակարգողի գործառույթները գերազանց կատարելու համար: Շնորհակալագրով պարգևատրվել են նաև 2017 թվականին Փաստաբանների պալատի գրադարանից առավելագույնն օգտված փաստաբաններ Արևիկ Եղիազարյանը և Վարդգես Ծառուկյանը: Փաստաբանների պալատը հավաստագրեր է հանձնել նաև ամենաերիտասարդ՝ 21 ամյա փաստաբան Արման Գրիգորյանին և ամենատարեց փաստաբան՝ 94 ամյա Նարիման Միրզաբեկյանին:

2017 թվականին բարձր առաջադիմություն ցուցաբերելու համար Փաստաբանական դպրոցի ունկնդիրներ Ռուզաննա Վազրիկի Հարությունյանին և Դիանա Քարազյանին շնորհակալագրեր են հանձնվել: Միջոցառման պաշտոնական մասին հաջորդել է համերգային ծրագիրը:






ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

➤ Պալատի խորհրդի կարգապահական որոշումների շարունակական հրապարակում www.advocates.am ինտերնետային կայքի միջոցով.

Փաստաբանների պալատի կայքէջում «Խորհրդի որոշումներ կարգապահական գործերով» բաժնում շարունակաբար հրապարակվում են կարգապահական գործերով բոլոր որոշումները: Ընդ որում՝ կայքում ներդրված հատուկ ֆիլտրման համակարգի միջոցով կայքն ավտոմատ գեներացնում է տվյալ որոշման հետ փոխկապակցված իրավական ակտերը, օրինակ՝ ըստ իրավական ակտի հասցեատիրոջ (փաստաբանի անվան և ազգանվան), վարքագծի կանոնագրքի համապատասխան կետի, ըստ որոշման եզրափակիչ մասի (կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ վարույթը կարճելու մասին որոշում), տույժի տեսակի և այլն:





➤ **Վարքագծի հարցերի վերաբերյալ քննարկումների կազմակերպում:**

«Փաստաբանների վերապատրաստման» կարգի համաձայն՝ Փաստաբանները պետք է վերապատրաստվեն «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» առարկայի շրջանակներում հաստատված թեմաներով:

Փաստաբանների համար մասնագիտական վարվելակերպի թեմաներով վերապատրաստվելու հնարավորություն ընձեռելու նպատակով 2017 թվականին փաստաբանների պարտադիր վերապատրաստման դասընթացների ժամանակացույցում յուրաքանչյուր ամիս ներառված է եղել, որպես կանոն, երկուսից չորս դասընթաց «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» թեմայով՝ ըստ առանձին ենթաինստիտուտների: Օրինակ՝ փաստաբանների փոխհարաբերությունները վստահորդների հետ, փաստաբանների փոխհարաբերությունները դատարանների կամ վարույթ իրականացնող մարմինների հետ և այլն:

«Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» թեմայով վերապատրաստման դասընթացները վարել են Փաստաբանների պալատի խորհրդի անդամները՝ առավել արդյունավետ դարձնելով Փաստաբանների պալատի խորհրդի փորձի փոխանակումը փաստաբանների հետ:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ



**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 11.02.2017թ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

Փաստաբանների պալատի նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր հերթական ժողով հրավիրելու մասին» 21.12.2016թ. № 500-Լ որոշմամբ 2017 թվականի փետրվարի 11-ին, հրավիրվել էր Փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ «Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն», «Փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն», և ««Փաստաբանի օր» սահմանելու մասին» օրակարգային հարցերով:

**««Փաստաբանի օր» սահմանելու մասին»
օրակարգային հարցով քվեարկություն.**

Փաստաբանների ընդհանուր ժողովով փաստաբանի օրը որոշելու նպատակով Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ ձևավորվել էր ժամանակավոր աշխատանքային խումբ, ինչպես նաև հաստատվել էր ««Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին» կարգ:

Նշված կարգի համաձայն փաստաբանները, ինչպես նաև աշխատանքային խումբը «Փաստաբանի օր» սահմանելու վերաբերյալ իրենց առաջարկները համապատասխան հիմնավորումներով ներկայացրել էին Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի նախագահին: Նշված առաջարկների հաշվառմամբ ընդհանուր ժողովի՝ ««Փաստաբանի օր» սահմանելու մասին» օրակարգային հարցով քվեաթերթիկում որպես «Փաստաբանի օր» սահմանելու տարբերակներ ներկայացված են եղել հունիսի 2-ը, հունիսի 11-ը, հունիսի 18-ը, նոյեմբերի 9-ը, դեկտեմբերի 6-ը և դեկտեմբերի 14-ը:

Փաստաբանների պալատի կանոնադրության համաձայն նշված օրակարգային հարցով ընդհանուր ժողովը կարող էր կայացած համարվել և «Փաստաբանի օր» սահմանվել, եթե ներկայացված տարբերակներից որևէ մեկի օգտին քվեարկեր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող փաստաբանների ընդհանուր թվի պարզ մեծամասնությունը:



Լուսանկարներ Փաստաբանների պալատի
11.02.2017 թվականի ընդհանուր ժողովից



Համաձայն ««Փաստաբանի օր» սահմանելու մասին» օրակարգային հարցով քվեարկության արդյունքներն ամփոփող հաշվիչ հանձնաժողովի 11.02.2017թ. թիվ 1 արձանագրության՝ ժողովին մասնակցելու իրավունք են ունեցել 1780 փաստաբան, ըստ ընտրական ցուցակի ստորագրությունների՝ քվեաթերթիկ են ստացել 1163 փաստաբան, սակայն «Փաստաբանի օրվա» ներկայացված տարբերակներից առավելագույն ծայներ ստացած առաջարկի՝ հունիսի 2-ի օգտին քվեարկել են 298 փաստաբան, ինչը չի բավարարել նշված տարբերակը կանոնադրության համաձայն որպես «Փաստաբանի օր» ընդունված համարելու համար:

**«Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն»
օրակարգային հարցով քվեարկություն.**

11.02.2017 թվականի ընդհանուր ժողովին որպես խորհրդի անդամի թեկնածու էր առաջադրվել 39 փաստաբան: Փաստաբանների պալատի խորհրդի անդամի ընտրությունը կրում է վարկանիշային բնույթ և Փաստաբանների պալատի կանոնադրության համաձայն առաջադրված թեկնածուներից վարկանիշային կարգով կարող են խորհրդի անդամ ընտրվել առավել շատ «կողմ» ծայներ ստացած 12 (տասներկու) թեկնածուները:

Համաձայն «Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն» օրակարգային հարցով քվեարկության արդյունքներն ամփոփող հաշվիչ հանձնաժողովի 12.02.2017թ. թիվ 1 արձանագրության՝ ժողովին մասնակցելու իրավունք են ունեցել 1780 փաստաբան, ըստ ընտրական ցուցակի ստորագրությունների՝ քվեաթերթիկ են ստացել 1163 փաստաբան:

Խորհրդի անդամների 11.02.2017 թվականի ընտրությանն առաջադրված (ինքնաառաջադրված) թեկնածուները, ինչպես նաև վարկանիշային կարգով յուրաքանչյուրի ստացած միավորների թիվը ներկայացված է ստորև.

<i>Nº</i>	<i>Խորհրդի անդամի թեկնածուի ազգանունը և անունը</i>	<i>Թեկնածուի՝ «Կողմ» ստացած ծայների թիվը</i>	<i>«Կողմ» ծայների քանակը՝ տոկոսային արտահայտմամբ</i>
1	Բաբայան Սիմոն	714	61%
2	Առուստամյան Մելանյա	651	56%
3	Մեժլումյան Կարեն	644	55%
4	Ղազարյան Արայիկ	638	55%



5	Խուրշուդյան Տիգրան	614	53%
6	Հարությունյան Հարություն	574	49%
7	Սարգսյան Կարեն	550	47%
8	Սիմոնյան Տարոն	535	46%
9	Հարությունյան Նելլի	525	45%
10	Աղաջանյան Կարապետ	508	44%
11	Ասատրյան Սեդրակ	505	43%
12	Անանյան Հրանտ	484	42%
13	Գյոզալյան Գևորգ	402	35%
14	Վարոսյան Երվանդ	379	33%
15	Սահակյան Ռուբեն	329	28%
16	Սիմոնյան Լիպարիտ	310	27%
17	Սահակյան Լուսինե	297	26%
18	Աթանեսյան Տիգրան	294	25%
19	Սիրունյան Ալեքսանդր	250	21%
20	Դեմիրջյան Գայանե	203	17%
21	Ֆերոյան Արմեն	197	17%
22	Բալյան Լիանա	192	17%
23	Գալիկյան Գարիկ	176	15%
24	Գրիգորյան Գուրգեն	169	15%
25	Գրիգորյան Դիանա	169	15%
26	Կիրակոսյան Կարեն	169	15%
27	Գրիգորյան Արթուր	161	14%
28	Աղաջանյան Էդուարդ	149	13%
29	Չամսարյան Հովհաննես	147	13%
30	Խաչիկյան Վրեժ	137	12%
31	Հարությունյան Զորայր	120	10%
32	Մելիքյան Արթուր	118	10%
33	Դավթյան Գևորգ	115	10%
34	Հակոբյան Զոյա	97	8%
35	Բադալյան Արծրուն	92	8%
36	Պողոսյան Սլավիկ	79	7%
37	Մկրտչյան Արսեն	67	6%
38	Տեր-Վարդանյան Ռուզաննա	67	6%
39	Սարգսյան Կարինե	34	3%



«Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն» օրակարգային հարցով քվեարկության արդյունքներն ամփոփող հաշվիչ հանձնաժողովի 12.02.2017թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ վարկանիշային կարգով չորս տարի ժամկետով Փաստաբանների պալատի խորհրդի անդամ են ընտրվել ստորև ներկայացված փաստաբանները՝ քվեների նշված համամասնությամբ.

			
Սիկուն Բաքչյան (արվտնագիր N° 55) 714 ձայն	Մելանյա Առուստամյան (արվտնագիր N° 7) 651 ձայն	Կարեն Մեծոյան (արվտնագիր N° 2) 644 ձայն	Արայիկ Ղազարյան (արվտնագիր N° 2138) 638 ձայն
			
Տիգրան Խուրշուդյան (արվտնագիր N° 451) 614 ձայն	Հարություն Հարությունյան (արվտնագիր N° 916) 574 ձայն	Կարեն Սարգսյան (արվտնագիր N° 1091) 550 ձայն	Տարոն Սիմոնյան (արվտնագիր N° 1092) 535 ձայն
			
Նեյի Հարությունյան (արվտնագիր N° 563) 525 ձայն	Կարապետ Աղաջանյան (արվտնագիր N° 35) 508 ձայն	Սեդրակ Ասատրյան (արվտնագիր N° 799) 505 ձայն	Հրանդ Անանյան (արվտնագիր N° 1156) 484 ձայն

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՆԱՎԵՃ - ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խորհրդի անդամի թեկնածուներին արտահայտվելու, իրենց նախընտրական ծրագրերը ներկայացնելու և ընտրող փաստաբանների հարցերին պատասխանելու նպատակով Փաստաբանների պալատը 2017 թվականի փետրվարի 8-ին կազմակերպել էր Փաստաբանների պալատի խորհրդի անդամների թեկնածուների բանավեճ-քննարկում: Հանդիպումը վարել է փաստաբան Գառնիկ Թովստարյանը: Պալատի կողմից հրավիրված Խորհրդի անդամ առաջադրված 39-ը թեկնածուից քննարկմանը ներկայացել էր 21-ը՝



1. Աղաջանյան Էդուարդ
2. Աղաջանյան Կարապետ
3. Անանյան Հրանտ
4. Առուստամյան Մելանյա
5. Ասատրյան Սեդրակ
6. Բաբայան Սիմոն
7. Բադալյան Արծրուն
8. Դավթյան Գևորգ
9. Դեմիրջյան Գայանե
10. Խաչիկյան Վրեժ
11. Խուրշուդյան Տիգրան
12. Հարությունյան Հարություն
13. Հարությունյան Նելլի
14. Ղազարյան Արայիկ
15. Մեժլումյան Կարեն
16. Մկրտչյան Արսեն
17. Պողոսյան Սլավիկ
18. Սարգսյան Կարինե
19. Սարգսյան Կարեն
20. Տեր-Վարդանյան Ռուզաննա
21. Ֆերոյան Արմեն





Քննարկման կարգի համաձայն՝ վարողը ներկա թեկնածուներին ազգանվան այբբենական հերթականությամբ արտահայտվելու հնարավորություն է ընձեռել: Թեկնածուները, նախընտրական ելույթներից հետո, պատասխանել են փաստաբանների կողմից հնչեցրած հարցերին: Սահմանված կարգի համաձայն՝ յուրաքանչյուր փաստաբան-ընտրող մեկ հարց տալու հնարավորություն է ստացել:

Հիմնականում հարցերը ծավալվել են ցուցակով ընտրությունների գնալը հիմնավորելու, կարգապահական վարույթ հարուցելու կարգի, կարգապահական պատասխանատվության ենթարկելու, փաստաբանների պալատից անհետացած խոշոր գումարի հետագա ճակատագրի, խորհրդի անդամների լիազորությունների շրջանակն ընդլայնելու շուրջ:

Անդրադարձ է եղել հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությանը, խորհրդի որոշումների վիճակագրությանը և խորհրդի կազմում Փաստաբանների պալատի աշխատակազմից անդամ ընդգրկվելու խնդիրներին: Քննարկմանը հնչել են նաև Փաստաբանների հեղինակության բարձրացմանը, գործող որոշ կարգերի վերանայմանն առնչվող հարցեր:

«Փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն» օրակարգային հարցով քվեարկություն.

11.02.2017 թվականի ընդհանուր ժողովին որպես կարգապահական գործ նախապատրաստող անձի թեկնածու էր առաջադրվել 18 փաստաբան:

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի 12.02.2017թ. թիվ 1 արձանագրության՝ ժողովին մասնակցելու իրավունք են ունեցել 1780 փաստաբան, ըստ ընտրական ցուցակի ստորագրությունների՝ քվեաթերթիկ են ստացել 1163 փաստաբան:

Համաձայն «Փաստաբանների պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձանց ընտրություն» օրակարգային հարցով քվեարկության արդյունքներն ամփոփող հաշվիչ հանձնաժողովի 12.02.2017թ. թիվ 2 արձանագրության՝ վարկանիշային կարգով Փաստաբանների պալատի կարգապահական գործ նախապատրաստող են ընտրվել ստորև ներկայացված փաստաբանները՝ քվեների նշված համամասնությամբ.

№	Կարգապահական գործ նախապատրաստող անձի թեկնածուի ազգանունը և անունը	Թեկնածուի՝ «Կողմ» ստացած ձայների թիվը	«Կողմ» ձայների քանակը՝ տոկոսային արտահայտմամբ
1	Թովմասյան Մարինե	527	38%
2	Բաբայան Հունան	505	36%
3	Քամալյան Կարեն	505	36%



4	Կիրակոսյան Վիկտորյա	443	34%
5	Բալոյան Ռուբեն	441	33%
6	Գրիգորյան Սյուզաննա	423	33%
7	Ոսկանյան Ստեփան	414	32%
8	Սիմոնյան Արմեն	391	31%
9	Սարգսյան Նարինե	385	31%
10	Մխիթարյան Ռիմա	378	30%
11	Հովհաննիսյան Գոհար	367	29%
12	Մաթևոսյան Հովհաննես	366	29%
13	Պետրոսյան Հայկ	357	28%
14	Սողոմոնյան Արմեն	348	38%
15	Մարտիրոսյան Գևորգ	343	36%
16	Մկրտչյան Կարեն	339	36%
17	Մարտիրոսյան Գուրգեն	331	34%
18	Սարգսյան Նվեր	315	27%

■ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 09.09.2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Փաստաբանների պալատի նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր հերթական ժողով հրավիրելու մասին» 07.08.2017թ. № 225-Լ որոշմամբ 2017 թվականի սեպտեմբերի 9-ին, հրավիրվել էր Փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ «Փաստաբանների պալատի նախագահի ընտրություն» և «Փաստաբանների պալատի կանոնադրության (1.5 կետի) փոփոխության հաստատում» օրակարգային հարցերով:

■ «Փաստաբանների պալատի կանոնադրության (1.5 կետի) փոփոխության հաստատում» օրակարգային հարցով քվեարկություն.

Փաստաբանների պալատի կանոնադրության փոփոխությունը վերաբերել է Փաստաբանների պալատի վարչական շենքի հասցեի փոփոխությանը: Համաձայն հաշվիչ հանձնաժողովի՝ «Փաստաբանների պալատի կանոնադրության (1.5 կետի) փոփոխության հաստատում» օրակարգային հարցով

**քաղաք Երևան
Ջաջյան 7-2 շենք**





քվեարկության արդյունքներն ամփոփող 09.09.2017թ. թիվ L-1 որոշման՝ Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից Փաստաբանների պալատի կանոնադրության 1.5 կետի փոփոխությունը հաստատված է համարվել՝ քվեարկությանը մասնակցած ձայներից 1041 «Կողմ» ձայներով (95.7%):

**«Փաստաբանների պալատի նախագահի ընտրություն»
օրակարգային հարցով քվեարկություն.**



Փաստաբանների պալատի 09.09.2017թ. հերթական ընդհանուր ժողովին «Փաստաբանների պալատի նախագահի ընտրություն» օրակարգային հարցով որպես փաստաբանների պալատի նախագահի թեկնածու առաջադրման միջոցով գրանցվել է Արա Գագիկի Զոհրաբյանը (արտոնագիր № 1):

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի՝ «Փաստաբանների պալատի նախագահի ընտրություն» օրակարգային հարցով քվեարկության արդյունքներն ամփոփող 09.09.2017թ. թիվ Ն-1 որոշման՝ Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից չորս տարի ժամկետով Փաստաբանների պալատի նախագահ է ընտրվել փաստաբան **Արա Գագիկի Զոհրաբյանը**՝ քվեաթերթիկներ ստացած ընդհանուրը 1087 փաստաբանների 1002 «Կողմ» ձայներով (92.1%):





ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ 2005 - 2017ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փաստաբանների պալատի կազմավորումից հետո փաստաբանների պալատի նախագահի առաջին ընտրությունը տեղի է ունեցել **08.10.2005 թվականի** ընդհանուր ժողովով, որին առաջադրված է եղել երկու թեկնածու՝ փաստաբան Ենոք Ազարյանը և փաստաբան Ռուբեն Սահակյանը: Ըստ ընտրողների ցուցակի (գործող փաստաբանների ցուցակ) քվեարկությանը մասնակցելու իրավունք են ունեցել **469 փաստաբան:** Քվեարկությանը փաստացի մասնակցել է **369 փաստաբան, այսինքն՝ ընտրողների 77%-ը**, իսկ վարկանիշային կարգով **առավել շատ կողմ ձայներ ստացած թեկնածուն՝ փաստաբան Ռուբեն Սահակյանը** ընտրվել է Փաստաբանների պալատի նախագահ՝ **227 կողմ ձայներով**, ինչը կազմում է քվեարկության մասնակիցների **63%-ը** կամ այդ պահի դրությամբ գործող փաստաբանների ընդհանուր թվի **48%-ը:**

Փաստաբանների պալատի նախագահի 03.10.2009 թվականի ընտրությանն առաջադրված է եղել միայն մեկ թեկնածու՝ փաստաբան Ռուբեն Սահակյանը: Ըստ ընտրողների ցուցակի (գործող փաստաբանների ցուցակ) քվեարկությանը մասնակցելու իրավունք են ունեցել **781 փաստաբան:** Քվեարկությանը փաստացի մասնակցել է **349 փաստաբան, այսինքն՝ ընտրողների 45%-ը**, իսկ փաստաբան Ռուբեն Սահակյանը վերընտրվել է Փաստաբանների պալատի նախագահ՝ **326 կողմ ձայներով**, ինչը կազմում է քվեարկության մասնակիցների **93%-ը** կամ այդ պահի դրությամբ գործող փաստաբանների ընդհանուր թվի **42%-ը:**





Փաստաբանների պալատի նախագահի 14.09.2013 թվականի ընտրությանը որպես փաստաբանների պալատի նախագահի թեկնածու առաջադրված են եղել փաստաբան Տիգրան Աթանեսյանը, փաստաբան Կրոմվել Գրիգորյանը և փաստաբան Արա Զոհրաբյանը:

Ըստ ընտրողների ցուցակի (գործող փաստաբանների ցուցակ) քվեարկությանը մասնակցելու իրավունք են ունեցել **1370 փաստաբան**, քվեարկությանը փաստացի մասնակցել է **913 փաստաբան**, այսինքն՝ **ընտրողների 67%-ը**, իսկ վարկանիշային կարգով առավել շատ կողմ ձայներ ստացած **թեկնածուն՝ փաստաբան Արա Զոհրաբյանը ընտրվել է Փաստաբանների պալատի նախագահ՝ 713 կողմ ձայներով**, ինչը կազմում է **քվեարկության մասնակիցների 78%-ը** կամ այդ պահի դրությամբ գործող փաստաբանների ընդհանուր թվի **52%-ը**:

Փաստաբանների պալատի նախագահի **09.09.2017թ. ընտրությանն** առաջադրված է եղել միայն մեկ թեկնածու՝ փաստաբան Արա Զոհրաբյանը: 09.09.2017թ. ընդհանուր ժողովին ըստ ընտրողների ցուցակի (գործող փաստաբանների ցուցակ) քվեարկությանը մասնակցելու իրավունք են ունեցել **1852 փաստաբան**: Քվեարկությանը փաստացի մասնակցել է **1087 փաստաբան**, այսինքն՝ **ընտրողների 59%-ը**, իսկ փաստաբան Արա Զոհրաբյանը վերընտրվել է Փաստաբանների պալատի նախագահ՝ **1002 կողմ ձայներով**, ինչը կազմում է **քվեարկության մասնակիցների 92%-ը** կամ այդ պահի դրությամբ գործող փաստաբանների ընդհանուր թվի **54%-ը**:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն վարկանիշային կարգով փակ գաղտնի քվեարկությամբ չորս տարի պաշտոնավարման ժամկետով ընտրվում են նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամները:

Փաստաբանների պալատի խորհրդի անդամների 09.03.2013 թվականի ընտրություններին առաջադրված է եղել **31 թեկնածու**, որոնցից վարկանիշային կարգով խորհրդի անդամ են ընտրվել առավել շատ կողմ ձայներ ստացած 12 թեկնածուները:

Փաստաբանների պալատի խորհրդի անդամների 09.03.2013 թվականի ընտրություններին ըստ ընտրողների ցուցակի (գործող փաստաբանների ցուցակ) քվեարկությանը մասնակցելու իրավունք են ունեցել **1376 փաստաբան**, քվեարկությանը փաստացի մասնակցել է **753 փաստաբան**, այսինքն՝ **ընտրողների 55%-ը**:

Փաստաբանների պալատի խորհրդի անդամների 11.02.2017 թվականի ընտրություններին առաջադրված է եղել **39 թեկնածու**, ըստ ընտրողների



ցուցակի (գործող փաստաբանների ցուցակ) քվեարկությանը մասնակցելու իրավունք են ունեցել **1780 փաստաբան**, քվեարկությանը փաստացի մասնակցել է **1163 փաստաբան, այսինքն՝ ընտրողների 65%-ը**:

Տարեթիվը	Ընտրության տեսակը	Գործող փաստաբանների թիվը (ընտրական ցուցակով)	Քվեարկությանը մասնակցած փաստաբանների թիվը		«Կողմ» ձայների թիվը		«Կողմ» ձայների % -ը փաստաբանների ընդհանուր թվի հաշվարկով
2005թ. (08.10.2005թ.)	Նախագահի ընտրություն	469	363	77%	227	63%	48%
2009թ. (03.10.2009թ.)	Նախագահի ընտրություն	781	349	45%	326	93%	42%
2013թ. (09.03.2013թ.)	Խորհրդի անդամների ընտրություն	1376	753	55%	—	—	—
2013թ. (14.09.2013թ.)	Նախագահի ընտրություն	1370	913	67%	713	78%	52%
2017թ. (11.02.2017թ.)	Խորհրդի անդամների ընտրություն	1780	1163	65%	—	—	—
2017թ. (09.09.2017թ.)	Նախագահի ընտրություն	1852	1087	59%	1002	92%	54%





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՐՁՐԱՅՐԵԼ Է ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՆՈՐՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Փաստաբանների պալատի խորհուրդը 19.09.2017թ. որոշում է կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի (երրորդ նախադասության) սահմանադրականության հարցով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին:

Հիշատակված քրեադատավարական նորմերը վերաբերում են մեղադրյալի կամքին հակառակ հանրային պաշտպան նշանակելու դեպքերին, որոնք են՝

- կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով.

- կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում.

- կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին.

- հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է.

- քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղսունակության վիճակում.

- կասկածյալը կամ մեղադրյալն անգործունակ է.

- դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքում.

- դատարանը կիրառում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան (դափնիքից հեռացնելը):

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի քննության արդյունքում ՀՀ Սահմանադրական դատարանը 13.02.2018թ. կայացրել է թիվ ՍԴՈ-1403 որոշումը, որով գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ



հոդվածի 5-րդ մասը, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 72-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ նախադասությունը որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐԲԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

2018 թվականի հոկտեմբերին շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծը, որով նախատեսվել է փաստաբանի նկատմամբ դատարանի կողմից, որպես դատական սանկցիա տուգանքի կիրառման հնարավորություն:

Փաստաբանների պալատը նշված նախագծի ընդունումը համարել է անթույլատրելի:

Փաստաբանների պալատը իրավասու պետական մարմիններին ներկայացրել է դիրքորոշում նշելով, որ փաստաբանի նկատմամբ դատարանի ներգործության միջոցը գործող կարգավորմամբ ունի միջնորդավորված բնույթ և իրավական հետևանք կարող է առաջացնել միայն այն դեպքում, երբ Փաստաբանների պալատի խորհուրդն է փաստաբանի վարքագծում խախտում արձանագրում: Նշված իրավակարգավորումը փաստաբանի լավագույն երաշխիքն է դատարանի հնարավոր անհիմն ներգործության միջոցներից պաշտպանվելու համար:

Փաստաբանների պալատն իր դիրքորոշման հիմքում դրել է նաև խնդրո առարկա հարցով միջազգային իրավական կարգավորումները:

Մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. №Rec(2000)21 հանձնարարականի 1-ին սկզբունքի 1-ին կետի համաձայն՝ հարկավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունը առանց խտրականության և իշխանությունների կամ հասարակության կողմից անիրավաչափ միջամտության, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթների լույսի ներքո:

Նույն սկզբունքի 4-րդ կետի համաձայն՝ փաստաբանները չպետք է տուժն հետևանքներից կամ ենթարկվեն ցանկացած պատժամիջոցների կամ ճնշումների վտանգի, երբ գործում են իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան:

Մեկ այլ միջազգային իրավական փաստաթուղթ ևս պետության կառավարության համար սահմանում է փաստաբանների համար իրենց մասնագիտական բոլոր պարտականությունները սպառնալիքներից զերծ մթնոլորտում կատարումն ապահովելու պարտականություն: Մասնավորապես



ՄԱԿ-ի կողմից 1990թ. ընդունված «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»-ի 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ կառավարություններն ապահովում են, որպեսզի փաստաբանները կարողանան իրենց մասնագիտական բոլոր պարտականությունները կատարել սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ անարդարացի միջամտությունից զերծ մթնոլորտում:





«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

2017 թվականի հոկտեմբերի 18-ին Փաստաբանների պալատը քննարկում էր նախաձեռնել «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:

Քննարկմանը մասնակցել են Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներ, ՀՀ ոստիկանության, երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փաստաբաններ և շահագրգիռ այլ անձինք:



2017 թվականի նոյեմբերի 15-ին Փաստաբանների պալատի փորձագիտական խմբի կողմից կազմվել է Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնությունից տուժած անձանց պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության բարեփոխման հայեցակարգը, որը նպատակ է հետապնդել սահմանել իրավական հիմքեր և կառուցակարգեր գործող օրենսդրական ակտերում համապատասխան



փոփոխություններ և(կամ) լրացումներ կատարելու համար, որոնք ուղղված կլինեն ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության հետևանքով տուժած անձանց իրավունքների պաշտպանության կառուցակարգերի բարեփոխմանն ու, անհրաժեշտության դեպքում, նոր մեխանիզմների սահմանմանը, որոնք՝

✓ կընդգծեն պետության թիրախային սահմանադրական պարտավորությունը պաշտպանել և ամրապնդել ընտանիքը՝ որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ հռչակված՝ հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրության հիմք.

✓ ընտանիքում բռնության կանխարգելման և բռնությունից տուժած անձանց պաշտպանության ոլորտում պետության քաղաքականությունը կդարձնեն առավել հստակ, բազմակողմանի և արդյունավետ.

✓ կբարձրացնեն հանրության իրավական և սոցիալական գիտակցության, ընտանեկան հարաբերություններում բարեվարքության մակարդակը՝ ձևավորելով ընտանիքում բռնության նկատմամբ հասարակական անհանդուրժողականության մթնոլորտ և սոցիալական միջավայր, ինչպես նաև ամրապնդելով ընտանեկան համերաշխությունը.





Հավելված թիվ 1

ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2017թ. հաշվետվության

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատության ժամանակահատվածը՝ 2016 - 2017 թվականներ

№	Փաստաբանների նկատմամբ 2016 թվականին հարուցված վարույթներ (քանակ)	2016	2017	տարբեր. թվային արտահայտմամբ	տարբեր. տոկոսային արտահայտմամբ
		226	194	- 32	- 14%
1.	Փաստաբանների դեմ բողոքների հիման վրա հարուցված վարույթների թիվը ¹³	35	41	6	17%
2.	Դատական սանկցիաների հիման վրա հարուցված վարույթների թիվը	21	86	65	310%
3.	Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը	132	38	-87	- 66%
4.	Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը	38	29	-9	- 24%



¹³ Բողոքներ փաստաբանների վստահորդներից, քաղաքացիներից և դատավարական հակառակորդ կողմի փաստաբաններից:



Հավելված թիվ 2

ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2017թ. հաշվետվության

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

№	1.		2.		1 և 2 սյունակների համեմատական 43%
	Փաստաբանների դեմ ստացված բողոքների ընդհանուր քանակը այդ թվում՝	325	Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ, այդ թվում՝	140	
1.1	փաստաբանների վստահողների և քաղաքացիների բողոքներ	197	փաստաբանների վստահողների և քաղաքացիների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	41	21%
1.2	փաստաբանների բողոքներ փաստաբանների դեմ	20	փաստաբանների բողոքների հիման վրա փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթներ	8	40%
1.3	դատական սանկցիաներ	86	դատական սանկցիաների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	86	100%
1.4	այլ բողոքներ ¹⁴	22	այլ բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	5	23%

¹⁴ այդ թվում՝ դատախազության, ոստիկանության, քննչական մարմինների, դատարանների և դատավորների (դատական սանկցիա չհանդիսացող բողոքներ) և այլն:



2017 թվականի հունվարից դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատում փաստաբանների դեմ ստացվել են ընդհանուրը **239 բողոք**, որոնցից գերակշիռ մասը՝ 197 բողոք ներկայացվել են քաղաքացիների և կազմակերպությունների կողմից, որոնք հանդիսանում են տվյալ փաստաբանի վստահորդ (այդ թվում՝ նախկին վստահորդ) կամ փաստաբանի վստահորդի հակառակորդ կողմ:

Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների և փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումների ընդհանուր վիճակագրական թվերի համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ փաստաբանների դեմ ներկայացված ընդհանուր **325 բողոքներից կարգապահական վարույթ հարուցվել է ընդամենը 127 բողոքի հիման վրա**, այսինքն՝ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել է ստացված բողոքների ընդհանուր թվի 40%-ը կազմող դեպքերում:

Բողոքների¹⁵ հիման վրա հարուցված կարգապահական 325 վարույթից 86-ի հիմքում ընկած են դատական սանկցիա կիրառելու մասին դատարանների որոշումները, ինչը կազմում է հարուցված կարգապահական վարույթների **32%-ը**: Դատական սանկցիան փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և՛ առիթ է և՛ հիմք, ընդ որում՝ պարտադիր հիմք:

Եթե պայմանականորեն փաստաբանների դեմ ներկայացված բողոքների և դրանց հիման վրա հարուցված կարգապահական վարույթների ընդհանուր թվից հանվի դատական սանկցիայի հիմքով հարուցված կարգապահական վարույթները, ապա կստացվի, որ 239 բողոքների դեպքում (առանց դատական սանկցիայի) փաստաբանների նկատմամբ հարուցվել է 54 կարգապահական վարույթ, ինչը կազմում է բողոքների (առանց դատական սանկցիայի) 23%-ը:




¹⁵ Տվյալ դեպքում որպես բողոք են հաշվառվել փաստաբանների դեմ քաղաքացիների, իրավաբանական անձանց, քննչական մարմիններին կողմից ներկայացված բողոքները, ինչպես նաև դատական սանկցիաները:



Հաշվետու ժամանակահատվածում փաստաբանների դեմ ներկայացված բողոքների վիճակագրության տոկոսային հարաբերակցությունն արտացոլված է ստորև ներկայացված գծապատկերում:

**Փաստաբանների դեմ սրացված բողոքների
ընդհանուր քանակը՝
325**





Հավելված թիվ 3
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2017թ. հաշվետվության

2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ԿՈՂՄԻՑ ՔՆՆՎԱԾ * ԵՎ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քննված կարգապահական գործերի ընդհանուր քանակը՝ 135				
Կարճված վարույթներ՝ 56 (42%)		Կարգապահական տույժով ավարտված վարույթներ՝ 79 (58%)		
Այդ թվում՝		Այդ թվում՝		
<u>Բողոքի (սանկցիայի) հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 68, որից *</u>				
Բողոքի հիմքով հարուցված վարույթի կարճում		37 55%	Բողոքի հիմքով հարուցված վարույթով տույժի որոշում	31 45%
<u>Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 57, որից</u>				
Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված վարույթի կարճում **		12 21%	Անդամավճարը չվճարելու հիմքով տույժի որոշում	45 79%
<u>Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 10, որից</u>				
Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված վարույթի կարճում ***		3 30%	Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով տույժի որոշում	7 70%



* 2017 թվականին քննվել են կարգապահական գործեր, որոնք հարուցվել են մինչև 2017 թվականը:

** կարճվել են արտոնություն կիրառելու հիմքով (առաջին անգամ հարուցված վարույթի շրջանակներում փաստաբանի կողմից անդամավճարն ամբողջությամբ վճարվելու դեպքում վարույթը կարճվում է):

*** կարճվել են արտոնություն կիրառելու հիմքով (առաջին անգամ հարուցված վարույթի շրջանակներում փաստաբանի կողմից դասընթացը հաջորդ կիսամյակ իր հաշվին անցնելու դիմում ներկայացնելու դեպքում վարույթը կարճվում է):





Հավելված թիվ 4

ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2017թ. հաշվետվության

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

համեմատական ժամանակահատված՝ 2016 և 2017 թվականներ

<i>№</i>	<i>Վիճակագրական տվյալի չափանիշը (համեմատության առարկան)</i>	<i>2016</i>	<i>2017</i>	<i>տարբերությունը թվային արտահայտմամբ</i>	<i>տարբերությունը տոկոսային արտահայտմամբ</i>
1	Փաստաբանների պալատի նախագահի որոշումների ընդհանուր թիվը	511	500	- 11	- 2%
2	Փաստաբանների պալատի նախագահի հրամանների թիվը	258	262	4	1,5%





Հավելված թիվ 5

ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2017թ. հաշվետվության

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատական ժամանակահատված՝ 2016 և 2017 թվականներ

№	Վիճակագրական տվյալի չափանիշը (համեմատության առարկան)	2016	2017	տարբերությունը թվային արտահայտմամբ	տարբերությունը տոկոսային արտահայտմամբ
1	Մտից փաստաթղթերի ընդհանուր թիվը	2623	3382	759	29%
2	Ելից փաստաթղթերի ընդհանուր թիվը՝ ներառյալ կարգապահական գործերով	2687	1783	- 904	- 34%





Հավելված թիվ 6

ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2017թ. հաշվետվության

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Nº	Վիճակագրական տվյալի չափանիշը	Վիճակագրական տվյալը
1	Խորհրդի ընթացիկ նիստերի քանակը	26
3	Ընթացիկ նիստերով խորհրդի որոշումների ընդհանուր քանակը	189
4	Խորհրդի կարգապահական գործերով նիստերի քանակը	234
5	Կարգապահական գործերով խորհրդի որոշումների ընդհանուր քանակը	139 *

* Կարգապահական գործերով խորհրդի որոշումների քանակի մեջ հաշվարկված է կարգապահական գործերով կայացված 135 որոշումը, կարգապահական վարույթը կասեցնելու մասին 2 որոշումը և կարգապահական վարույթի կասեցումը մերժելու մասին 2 որոշումը:





Հավելված թիվ 7

ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2017թ. հաշվետվության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՊԳ ՎԱՐԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատված՝ 01.01.2017 - 31.12.2017թթ.

1	հանրային պաշտպանների թիվը (այդ թվում՝ 0.5 և 0.25 հաստիքներով)	71
2	հաշվետու ժամանակաշրջանում վարած գործերի թիվը՝	5560
3	հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ գործերի թիվը՝	1277
4	հաշվետու ժամանակաշրջանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը՝	1040
5	հաշվետու ժամանակաշրջանում ավարտված գործերի թիվը՝	3243

Ա.	Նախաքննության փուլում վարած գործերի վերաբերյալ	
1	նախաքննության փուլում վարած գործերի թիվը՝	2065
որից		
1.1	նախաքննության փուլում ընթացիկ գործերի թիվը՝	335
1.2	նախաքննության փուլում հրաժարումների և փոխանցումների գործերի թիվը՝	539
1.3	նախաքննության փուլում ավարտված գործերի թիվը՝	1191
Նախաքննության փուլում ավարտված գործերով արձանագրված արդյունքները		
1	ամբողջությամբ կարճված գործերի թիվ	302
որից		
1.1	արդարացնող հիմքով կարճված գործերի թիվը	188
1.2	ոչ արդարացնող հիմքով կարճված գործերի թիվը	114
2	մասով կարճված գործերի թիվը	41
որից		
2.1	արդարացնող հիմքով կարճումների թիվը	31
2.2	ոչ արդարացնող հիմքով կարճումների թիվը	10
3	դատարան ուղարկված գործերի թիվը	813
4	արարքն ավելի մեղմ հոդվածով վերաորակումների (առաջադրված մեղադրանքների) թիվը՝	142
5	այլ	23
Ընդամենը՝		1321



Բ.	Առաջին ատյանի դատարանում վարած գործերի վերաբերյալ	
1	առաջին ատյանի դատարանում վարած գործերի թիվը՝	2774
որից		
1.1	առաջին ատյանի դատարանում ընթացիկ գործերի թիվը՝	812
1.2	առաջին ատյանի դատարանում հրաժարումների և փոխանցումների գործերի թիվը՝	424
1.3	առաջին ատյանի դատարանում ավարտված գործերի թիվը՝	1538
Առաջին ատյանի դատարանում ավարտված գործերով արձանագրված արդյունքները		
1	լրիվ արդարացումների թիվը՝	32
2	մասնակի արդարացումների թիվը՝	10
3	ամբողջությամբ կարճված գործերի թիվը՝	112
որից		
3.1	արդարացնող հիմքով կարճումների թիվը՝	4
3.2	ոչ արդարացնող հիմքով կարճումների թիվը՝	108
4	մասով կարճումների թիվը՝	9
5	քրեական պատասխանատվությունից ազատումների թիվը՝	6
6	պատժից ազատումների թիվը՝	6
7	օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժի նշանակումների թիվը՝	8
8	պայմանականորեն չկիրառված պատիժների թիվը՝	454
9	սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժատեսակի նշանակումների թիվը՝	49
10	բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման թիվը՝	57
11	դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումների թիվը՝	19
12	նշանակված տուգանքների թիվը	336
13	նվազ ծանր հոդվածով վերաորակումների կամ փոփոխված մեղադրանքների թիվը	42
14	այլ մեղադրական դատավճիռների թիվը՝	445
15	այլ	66
Ընդամենը՝		1651

Առաջին ատյանի դատարանի բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 243

Գ.	Վերաքննիչ դատարանում վարած գործերի վերաբերյալ	
1	վերաքննիչ դատարանում վարած գործերի թիվը՝	669
որից		
1.1	վերաքննիչ դատարանում ընթացիկ գործերի թիվը՝	102
1.2	վերաքննիչ դատարանում հրաժարումների և փոխանցումների գործերի թիվը՝	67
1.3	վերաքննիչ դատարանում ավարտված գործերի թիվը՝	500



Վերաքննիչ դատարանում ավարտված գործերով արձանագրված արդյունքները		
1	վերաքննիչ դատարանում պաշտպանական կողմի բերած՝ բավարարված բողոքների թիվը	82
այդ թվում՝		
1.1	արդարացվել է լրիվ	5
1.2	արդարացվել է մասնակի	1
1.3	կարճվել է ամբողջությամբ	7
1.4	կարճվել է մասով	3
1.5	արարքը վերադարձվել է ավելի մեղմ հոդվածով	1
1.6	պատիժը մեղմացվել է	19
1.7	կիրառվել է ՀՀ ՔՕ 64-րդ հոդված	2
1.8	կիրառվել է ՀՀ ՔՕ 70-րդ հոդված	32
1.9	պատժից ազատվել է	2
1.10	քրեական պատասխանատվությունից ազատվել է	0
1.11	կիրառվել է համաներում	0
1.12	բավարարվել է նյութական և (կամ) դատավարական իրավունքի խախտման հիմքով այլ պահանջը	7
1.13	եւ ի ուղարկվել ստորադաս դատարան՝ պաշտպանական կողմի պահանջով	2
1.14	քաղաքացիական հայցի մասով պահանջը մերժվել է	1
2	մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վերաքննիչ բողոքների թիվը՝	150
Ընդամենը՝		232

Վերաքննիչ դատարանի բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 150

Դ.	Վճռաբեկ դատարանում վարած գործերի վերաբերյալ	
1	վճռաբեկ դատարանում վարած գործերի թիվը՝	13
որից		
1.1	վճռաբեկ դատարանում ընթացիկ գործերի թիվը՝	0
1.2	վճռաբեկ դատարանում հրաժարումների և փոխանցումների գործերի թիվը՝	1
1.3	վճռաբեկ դատարանում ավարտված գործերի թիվը՝	12
Վճռաբեկ դատարանում ավարտված գործերով արձանագրված արդյունքները		
1	վճռաբեկ դատարանում պաշտպանական կողմի բերած՝ բավարարված բողոքների թիվը	6
այդ թվում՝		
1.1	արդարացվել է լրիվ	1
1.2	արդարացվել է մասնակի	0
1.3	կարճվել է ամբողջությամբ	0
1.4	կարճվել է մասով	0



1.5	արարքը վերաորակվել է ավելի մեղմ հոդվածով	0
1.6	պատիժը մեղմացվել է	0
1.7	կիրառվել է ՀՀ ՔՕ 64-րդ հոդված	0
1.8	կիրառվել է ՀՀ ՔՕ 70-րդ հոդված	0
1.9	պատժից ազատվել է	0
1.10	քրեական պատասխանատվությունից ազատվել է	0
1.11	կիրառվել է համաներում	0
1.12	բավարարվել է նյութական և (կամ) դատավարական իրավունքի խախտման հիմքով այլ պահանջը	1
1.13	ետ է ուղարկվել ստորադաս դատարան՝ պաշտպանական կողմի պահանջով	4
1.14	քաղաքացիական հայցի մասով պահանջը մերժվել է	0
2	մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վճռաբեկ բողոքների թիվը՝	0
3	առանց քննության թողնված վճռաբեկ բողոքների թիվը՝	0
Ընդամենը՝		6

Ե.	Հանձնման գործերի վերաբերյալ	
1	վարած հանձնումների թիվը՝	39
որից		
1.1	ընթացիկ հանձնումների թիվը՝	28
1.2	հանձնման գործերով հրաժարումների և փոխանցումների թիվը՝	9
1.3	ավարտված հանձնումների թիվը՝	2
Հանձնման՝ ավարտված գործերով արձանագրված արդյունքները		
1	կիրառված ժամանակավոր կալանավորումների թիվը՝	1
որից		
1.1	երկարացումը մերժված ժամանակավոր կալանավորումների թիվը՝	0
2	ժամանակավոր կալանավորումների չկիրառման թիվը՝	0
3	հանձնելու համար կալանավորումների թիվը՝	0
որից		
3.1	երկարացումը մերժված կալանավորումների թիվը՝	0
4	հանձնելու համար կալանավորումների չկիրառման թիվը՝	0
5	Նշում հանձնման արդյունքների վերաբերյալ	0
որից		
5.1	մերժված հանձնումների թիվը՝	0
5.2	թույլատրված հանձնումների վերաբերյալ	0
5.3	այլ	0

Կալանավորման բողոքարկումների և արձանագրված արդյունքների վերաբերյալ		
1	առանց բողոքարկման կալանավորումների փոփոխման թիվը	20
2	առանց բողոքարկման կալանավորումների վերացման թիվը	11
3	կալանավորումների մերժումների թիվը	30



4	կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի նշանակումների թիվը՝	15
5	բողոքարկման արդյունքում գրավի նշանակումների թիվը՝	10
6	կալանավորման բողոքարկումների թիվը	240
որից		
6.1	կալանավորման որոշումների դեմ բավարարված բողոքների թիվը՝	22
6.2	կալանավորման որոշումների դեմ մերժված բողոքների թիվը՝	117
7	ձերբակալումից ազատվել է բողոքարկման արդյունքում	21
Ընդամենը		327





Հավելված թիվ 8
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2017թ. հաշվետվության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՊԳ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
Հաշվետու ժամանակահատված՝ 01.01.2017 - 31.12.2017թթ.

Ա.	Հաշվետու ժամանակաշրջանում վարած գործերը	
1	ներկայացուցչությունների թիվը	1192
այդ թվում՝		
1.1	քաղաքացիական գործերով ներկայացուցչությունների թիվը	794
1.2	վարչական գործերով ներկայացուցչությունների թիվը	74
1.3	սահմանադրական գործերով ներկայացուցչությունների թիվը	0
1.4	տուժողի և այլ քրեական գործերով ներկայացուցչությունների թիվը	324
2	խորհրդատվությունների թիվը	5405
այդ թվում՝		
2.1	գրավոր խորհրդատվությունների թիվը	2056*
2.2	բանավոր խորհրդատվությունների թիվը	3349
Ընդամենը		6595

* որից 411-ը նախորդ տարիներից մնացորդ

Բ.	Առաջին ատյանի դատարանում վարած գործերը	քաղ.	վարչ.	ընդ.
1	Առաջին ատյանի դատարանում ավարտված գործերի թիվը	381	33	414
2	Առաջին ատյանի դատարանում ընթացիկ գործերի թիվը	298	21	319
3	Առաջին ատյանի դատարանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը	16	0	16
Ընդամենը		695	54	749



4	Հօգուտ վստահորդի կայացված վճիռների թիվը	270	15	285
այդ թվում՝				
ա)	ամբողջությամբ	204	11	215
բ)	մասնակի	66	4	70
4.1	Հաշտության համաձայնության հիմքով ավարտված գործերի թիվը	28	0	28
4.2	Հայցից հրաժարվելու հիմքով ավարտված գործերի թիվը	11	0	11
5	Ի վնաս վստահորդի կայացված և այլ դատական ակտերի թիվը	111	18	129
Գ.	Վերաքննիչ դատարանում գործերի թիվը	քաղ.	վարչ.	ընդ.
1	Վերաքննիչ դատարանում ավարտված գործերի թիվը	90	20	110
2	Վերաքննիչ դատարանում ընթացիկ գործերի թիվը	6	0	6
3	Վերաքննիչ դատարանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը	1	0	1
Ընդամենը		97	20	117
4	Հօգուտ վստահորդի բավարարված (մերժված) վերաքննիչ բողոքների թիվը	44	11	55
այդ թվում՝				
ա)	ամբողջությամբ	35	10	45
բ)	մասնակի	9	1	10
4.1	Հաշտության համաձայնության հիմքով ավարտված գործերի թիվը	1	0	1
5	Ի վնաս վստահորդի բավարարված (մերժված) բողոքների և այլ դատական ակտերի թիվը	46	9	55
Դ.	Վճռաբեկ դատարանում գործերի թիվը	քաղ.	վարչ.	ընդ.
1	Վճռաբեկ դատարանում ավարտված գործերի թիվը	2	0	2
2	Վճռաբեկ դատարանում ընթացիկ գործերի թիվը	0	0	0
3	Վճռաբեկ դատարանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը	0	0	0
Ընդամենը		2	0	2
4	Հօգուտ վստահորդի բավարարված (մերժված) վճռաբեկ բողոքների թիվը	2	0	2
այդ թվում՝				
ա)	ամբողջությամբ	2	0	2
բ)	մասնակի	0	0	0
4.1	Հաշտության համաձայնության հիմքով ավարտված գործերի թիվը	0	0	0
5	Ի վնաս վստահորդի բավարարված (մերժված) բողոքների և այլ դատական ակտերի թիվը	0	0	0



Ե. Տուժողի և այլ քրեական գործերով ներկայացուցչությունների թիվը		
այդ թվում՝		
ա)	տուժողի գործերով ներկայացուցչությունների թիվը	240
բ)	այլ քրեական գործերի թիվը	84
1	Տուժողի և այլ քրեական գործերով ավարտված գործերի թիվը	181
2	Տուժողի և այլ քրեական գործերով ընթացիկ գործերի թիվը	104
3	Տուժողի և այլ քրեական գործերով հրաժարումների և փոխանցված գործերի թիվը	39
Ընդամենը		324

Զ. Տուժողի և այլ ավարտված քրեական գործերով արձանագրված արդյունքները		
այդ թվում՝		
ա)	դատարան ուղարկված գործերի թիվը	14
բ)	մեղադրական դատավճիռների թիվը	17
գ)	ամբողջությամբ բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը	10
դ)	մասով բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը	1
ե)	վերացված կարճումների թիվը	6
զ)	քրեական հետապնդում չիրականացնելու (դադարեցնելու) վերացումների թիվը	0
է)	նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու վերացումների թիվը	3
ը)	դատական որոշման կատարման հետ կապված՝ ամբողջությամբ բավարարված բողոքների թիվը	9
թ)	դատական որոշման կատարման հետ կապված մասով բավարարված բողոքների թիվը	2
ժ)	արձանագրված այլ արդյունքների թիվը	142
ի)	տուժողի գործերով բավարարված քաղաքացիական հայցերի (վնասի հատուցումների) թիվը	10
որից՝		
ա)	բավարարվել է ամբողջությամբ	8
բ)	բավարարվել է մասով	2
Ընդամենը		214



Է.	Սահմանադրական դիմումներով գործերի թիվը	
1	ՍԴ կողմից վարույթ ընդունված դիմումների թիվը	0
2	Օրենքը հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ որոշումների թիվը	0
3	Մերժված ՍԴ դիմումների թիվը	0
4	ՍԴ կողմից վարույթ չընդունված և այլ դիմումների թիվը	4

Ը.	Խորհրդատվություն	
ա) Բանավոր խորհրդատվությունների թիվը՝ ըստ գործի տեսակների		
քաղաքացիական		2449
վարչական		273
քրեական		625
սահմանադրական		2
բ) Գրավոր խորհրդատվությունների թիվը՝ ըստ գործի տեսակների		
քաղաքացիական		1343
վարչական		187
քրեական		112
սահմանադրական		3

Ծանոթություն.

Հաշվետու ժամանակահատվածում՝

Բավարարված դիմումների թիվը՝ 6576

Մերժված դիմումների թիվը՝ 3

Դադարեցված որոշումների թիվը՝ 13

Ընդամենը 6592





Հավելված թիվ 9
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2017թ. հաշվետվության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ՝
ԸՍՏ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ¹⁶

Nº	Կատեգորիայի անվանումը	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածը, մասը և կետը	Դիմած քաղաքացիների թիվը 2015
1	Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներ	41-5-1	66
2	1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներ	41-5-2	945
3	դատապարտյալներ	41-5-3	585
4	ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Օ-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներ	41-5-4	599
5	Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներ	41-5-5	214
6	գործազուրկներ	41-5-6	989
7	միայնակ բնակվող կենսաթոշակառուներ	41-5-7	408

¹⁶ սույն հաշվառումն իրականացվում է քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերով:



8	առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք	41-5-8	1
9	փախստականներ	41-5-9	40
10	Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներ	41-5-10	1
11	անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում	41-5-11	1955
12	հոգերուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք	41-5-12	56
13	օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք	41-5-13	0
14	Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողները	41-5-14	0
15	խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով	41-5-15	0
Ընդամենը՝			5859

